

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-րդ ՏԱՐԻ

1886 ՄԱՐՏ 1

ԹԻԻ 3811

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 1 ՄԱՐՏ

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԱՊՈՒՇԸ

Ե.

Երկուշաբթի երեկոյ Լեւոն վերադարձաւ Կղզի սովորական ժամանակէն կանուխ, վասն զի անհանգիստ էր առջի օրը կինը մինակ ձգելուն համար։ Գոհ եղաւ տեղեկանալով որ իւր բացակայութեանը կինն առանձին չէր մնացած։ Յաջորդ առաւօտ վերջնական կերպով թողուցին հիւրանոցն եւ վերադարձան Բերա։ Լեւոն ազատելով այդ տաղտկալի կեանքէն կը խորհէր գործերն այնպէս կարգադրել որ կարողանար ընել հարկ եղած խնայողութիւններն, վճարել պարտքերն, ամէն ինչ կանոնաւորել եւ հանգստանալ։ Արտաքին երեւոյթները ցոյց կուտային թէ Լեւոնի ընտանեկան կեանքն անվրդով եւ խաղաղ պիտի անցնէր այդ ձմեռ։ Փոռթիւնէ կը վերադառնար Կղզիէն հանգարտօրէն. տան մէջ դէմքը զուարթ էր։ Շատ հաւանական կը թուէր որ այդ ձմեռը նա մայր լինի. այդ պարագային մէջ ի հարկէ կեսօրջն եւ հարսին միջեւ յարաբերութիւնը աւելի բարոք կը լինէին։

Սակայն կարծես թէ այդ խեղճ երիտասարդին ճակատը գրուած էր բնաւ հանգըստութիւն չվայելել։ Հազիւ վերադարձան Բերա, կը հարկադրուէր փոխել տունը, վասն զի ծախուած էր այդ տունը եւ նոր տան տէրը չէր ուզած վարձու տալ։ Կը յատկացնէր իւր բնակութեանը։ Լեւոն կը վարձէր նոր տուն մը. հարկ էր կանխիկ վճարել առաջին եռամսեային։ Պատրաստ դրամ չունէր, ամսական ամբողջապէս տրուաւ, որով խանգարեցան իւր տնտեսական ծրագրերն։ Յետոյ մայրն հիւանդացաւ. բաւական ատեն անկողնոյ ծառայեց. շարունակ բժիշկ կուգար. դեղերը սուղ էին։ Տան կառավարութիւնը տակն ու վրայ եւղած էր։ Սահակ աղա կը խմէր. Լեւոնի համար ոչ միայն ծախուց դուռ մ'էր հայրն, այլ նորա արբեցութիւնը զինքն անհանգիստ կ'ընէր։ Անհնարին եղաւ Լեւոնի կանոնաւորութիւն ներմուծել իւր հաստից ու ծախուց միջեւ։ Մէկ կողմէ կը վճարէր այն փոխառութիւնը զոր ամառն ըրած էր, միւս կողմէ նորանոր պարտքեր կ'ընէր հացավաճառին, մսավաճառին, ամէն ուրեք։ Այս անկարգութեանց, այս հիւանդութեանց մէջ Փոռթիւնէ մեծ ձանձրոյթ կ'զգար, եւ որ աւելի դժուարին էր Լեւոնի համար, կինը ոչ մէկ խօսք կը հասկնար։ Փոռթիւնէ կ'ուզէր որ ձմեռն ամէն հագուստները կատարեալ կերպով ունենայ, ոչ մէկ նորաձեւութիւն անձանօթ մնայ իրեն։ Գրեթէ ամէն օր այր եւ կին կը կռուէին։ Երբեմն յաղթանակը կը մնար Փոռթիւնէի, եւ մի նոր պարտք կը բարդուէր Լեւոնի հին պարտուց վրայ։

Փոռթիւնէ իրաւունք ունէր խստապահանջ լինելու արդուգործի, հագուստներու եւ նորաձեւութեանց մասին։ Նոր հորիզոն մը պարզուած էր իւր աչքերուն առաջ այն գիշերէն ի վեր յորում հիւրընկալեց Սինայ-

եան Մկրտիչը : Ինքն իւր անձին վրայ այ-
ժմ բարձր գաղափար ունէր : Որքան ալ
նախանձոտ էր , բայց և այնպէս կը ճանա-
չէր Տիկին Հերիգայ Սինայեանի արժանիքն ,
եւ սակայն Մկրտիչ Սինայեան կարող չէր
եղած դիմադրել իւր հրապուրանայ : Ա-
մուսնական հաւատարմութիւն , բարեկա-
մական կասեր , եկեղեցական օրհնութեամբ
ազգականութիւնը , ամէն ինչ առ ստն կո-
խած էր Մկրտիչ որպէս զի զինքը վայելէ :
Փոռթիւնէ կը կարծէր թէ իրական աշխար-
հակաութիւն մը ըրած էր : Եւ է՛ր չյու-
սալ նորանոր աշխարհակալութիւններ . ան-
գամ մը որ ճանաչարհ ելած էր , ո՛չ ապա-
քէն կրնար դիմել յաղթանակէ ի յաղթա-
նակ և համարուի ա օրուան կինը : — Ա՛հ ,
Տիկին Հերիգայ , դու կը խլես ինձմէ այն
անձը զոր կը սիրէի , եւ ահա ես կուգամ
յամպտակել ամուսինդ : Կը խորհաւայիր թէ
գեղեցիկ եւ . բայց ամուսինդ գրեզ անհամ
կը գտնէ բազմաթիւ ինձ հետ : — Եւ ո՞
գիտէ , նորանոր յաղթանակներն որպիսի
փոփոխութիւններ սկստի բերէին իւր վի-
ճակին : Եւ այդ ամէն երազներն իրակա-
նութիւն տեսնելու համար , միթէ հարկ չէ՞ր
դոհադութիւններ ընել : — Իսկ տխմար Լե-
ւոնը խնայողութեանց վրայ կը խօսէր ,
իւր թէ առանց արդուգարդի հնարաւոր
լինէր Փոռթիւնէի գրաւել իւր արժանաւոր
տեղն ընկերութեան մէջ , եւ կորզել ամու-
սիններն :

Եւ Լեւոն օր ըստ օրէ շուարած կը մը-
նար : Այնքան դժնդակ տառապանքներ ,
այնքան հոգեր , մտապանջութիւններ կը
մաշեցնէին զինքն , յիմարած էր : Գիշերները
ըսենն աչքերէն փախած էր եւ չարունակ
ափիսնի կուտար ոյժն որով միայն կը հան-
գըստանար փոքր ինչ : Իսկ Փոռթիւնէ կը
կատողէր : Զմեռը կ'անցնէր , ոչ մին իւր յոյ-
սերէն իրականութիւն կը լինէր : Լեւոն
այնքան յոգնած ու խոնջ էր որ շատ քիչ
անգամ գիշերներն այցելութեանց երթալու
հաճութիւն կուտար : Եւ առանց ամուսնոյ
ո՛ւր երթալ : Այն տարին Բերայի տարին
էր : Զբօսանք , երեկոյթ , պարահանդէսը
զիրար կը մէջին , եւ Լեւոն ափիսնը կ'առ-
նար ու կը պառկէր , եւ Փոռթիւնէ կը մը-
նար բանտարկուած : Սեպտեմբր այդ եղանա-
կին Փոռթիւնէ մի անգամ և եթ միջոց գը-

տած էր առանձին մնալ Սինայեանի հետ եւ
այդ ալ անուղղակի կերպիւ . — Աբրահամ
աղայի շնորհիւն : Այո՛ , Աբրահամ աղա
այժմ Փոռթիւնէի սիրելի անձն էր որոյ պէտ-
քերն ալ ըստ բաւականին կը հոգար : Փոռ-
թիւնէ ցականին չէր բացուած Աբրահամ
աղայի , միայն կը յուսար թէ օր մը նորա
աջակցութիւնն իրեն օգտակար պիտի լինի :
Զմրան վերջերն այնպիսի վիճակի մէջ էր
Փոռթիւնէ որ այցելութիւններ տալն ան-
պատեհ կը թուէր եւ գարնան առաջին
օրերը զաւակն ունեցաւ , աղջիկ մը : Հարկ
եղաւ կաթնոտ կին մը վարձել : Բայց ման-
կիկին ժպտալ կը մխիթարէր Լեւոնը եւ
կ'ուրախացնէր ընտանիքն : Կարծես թէ
նորածնին ժպտանքուն հետ նախախնա-
մութեան դուրս վերադարձաւ այդ տան
մէջ :

Ապրիլի վերջերն , օր մը Լեւոն հրաւեր
ստացաւ Մկրտիչ Սինայեանէ ներկայանալ
նոցա գրասենեակին : Սինայեան սիրալիր ըն-
դունելութիւն ընելով յայտնեց նմա թէ՛ կը
լսէ որ բաւական ծանր վիճակի մը մէջ
կը գտնուի դրամական տեսակէտով , և թէ
պարտուց ներքեւ ընկճեալ է : — Ինչո՞ւ ինձի
չես դիմեր այսպիսի պարագայներու մէջ ,
ըսաւ :

— Սրբէն ձեզ բաւական ճանճրոյթ
պատճառած ենք , այժմ ի՞նչպէս կրնայի հա-
մարձակիլ նորանոր ճանճրոյթներ եւս տալ :
— Այդ ի՞նչ խօսք է , Լեւոն , ըսաւ Սի-
նայեան , դուն մերն ես :

Եւ Սինայեան Մկրտիչի առաջարկու-
թեամբ Լեւոն հաշիւ մը պատրաստեց թէ
ի՞նչ դուրսի կը կարօտէր իւր բոլոր պարտ-
քերը վճարելու , ինքզինքը կանոնաւորելու ,
ինչպէս նաեւ օգափոխութեան մը երթալու
համար : — Վասն զի , կ'ըսէր Սինայեան ,
թէ՛ քու առողջութիւնդ — արդարեւ Լեւոն
շատ նիհարցած էր — , թէ՛ կնոջդ առող-
ջութիւնը , թէ՛ մերդ վիճակը կը պահան-
ջեն որ օգափոխութիւն մը ընէք : — Լեւոն
պէտք եղած գումարն յայտնեց , Մկրտիչ է-
փէնտի սնտուկը բացաւ , վճարեց գումարն
եւ Լեւոն պարտամուբհակ մը ստորագրեց
յառաջիկայ հոկտեմբերէն սկսեալ ամսէ մ-
միս՝ վճարելու պայմանաւ :

Լեւոն մոռցաւ ամէն վիշտ եւ արդարեւ
այլ եւս ի՞նչ վիշտ ունէր : Երբ շարժուն

մէջ վճարեց պարտքերն, հողաց ամենայն պէտքերն: Ծովթիւնէ դո՛ւ եւ ուրախ էր, եւ օղափոխութեան վրայ խօսեցան: — Ծովթիւնէ Մաքրի — Գիւղ կ'ուզէր: Լեւոն յարմար կը գտնէր այս տեղն թէ՛ ծովու եւ թէ՛ ցամաքի ճանապարհ ունենալուն պատճառաւ: Կիրակի օր մը զննացին տուն մը գտան եւ փոխադրուեցան:

Կարելի է գուշակել թէ ինչո՞ւ Սինայեան այգեքան օգտակար ուզեց ըլլալ Լեւոնի: Նախ իրապէս կը համակրէր այդ երիտասարդին: Յետոյ քանի որ յարաբերութիւններ հաստատած էր նորա կնիքը հետ, կ'ուզէր փոխարինութիւն մը ընել անուղղակի կերպով: Բաց աստի կը փափաքէր Ծովթիւնէի հետ յաճախ առանձին մնալ, տեղափոխութիւն մը կը նպաստէր այդ փափաքը գոհացնելու: Ծովթիւնէի անուղղակի առաջարկներու վրայ այդ փոխադրութիւնն ըրած էր: Ծովթիւնէ եւ Մկրտիչ համաձայնած էին կանխաւ Մաքրի — Գիւղի համար:

Կ'ըսեն թէ թշուառութիւն մը սովոր չէ միայնակ մտնել տան մը մէջ, այլ միշտ կ'ընկերանան նմա խումբ մը ուրիշ աղէտներ: Սակայն նոյնը ըսուած է նաեւ լաւութեանց համար եւս, թէպէտ քիչ կը պատահէ: Այդ բաղդին արժանացաւ Լեւոն: Ահա՛ ամիս մ'է որ Մաքրի — Գիւղ է, ընտանիքը առողջ, հանգիստ է, սիրուն մանկիկը կը մեծնայ: Ծովթիւնէ այլ եւս «ջղացաւ» չունի: Իւր գործերը կոկած է, բայց այդ ամէնը չը բաւէր եւ նոր բաղդ մը կը բացուի իրեն:

Պանք Օթօմանի մէջ կորուստ պաշտօն մը բաց կը մնար: Տնօրէններէն մին Լեւոնը առաջարկած էր այդ պաշտօնին համար: Վասն զի նա ոչ միայն թրքերէնի եւ ֆրանսերէնի հմուտ էր, այլ նաեւ գիտէր անգլիերէն: Մէկ ղեկավարութիւն միայն կը ներկայանար: Օտարազգի երիտասարդ մը միջակից էր Լեւոնի, այդ երիտասարդ աւելի շատ ժամանակէ ի վեր ծառայէր Պանք Օթօմանի մէջ քան Լեւոն, հետեւաբար կը կռթնէր իւր հնութեան վրայ: Բայց հնութիւնը հմութիւն չէ: Եւ յաղթանակը Լեւոնին մնաց: Իսկ օտարականը կը լինէր Լեւոնի կատաղի թշնամին:

Կարելի էր ըսել թէ Լեւոնի ճակատագիրը փոխուած էր: Ուրախութիւնը վերադարձած էր տան մէջ: Ծովթիւնէ մտնա-

ւանդ գոհունակութեան ամէն նշանները ցոյց կուտար: Իւր յարաբերութիւններն աւելի մտերմական էին տալով վերաբերմամբ, որուն հետ կը պտըտէր ամէն օր: Շաբաթը մի քանի անգամներ մինակ դուրս կ'ելնէր, կէս օրի մօտ, եւ մի քանի ժամ վերջ կը վերադառնար: Ի հարկէ տունէն կը կարծէին թէ այցելութիւններ կուտար, սակայն եթէ մէկը հետամուտ լինէր Ծովթիւնէի, կը տեսնէր թէ կ'ընթանայ յարաբաւ զէպի կայարանը: Միջօրէի չողեկաւորը կուգայ, առաջին վակոնի մը մէջէն դէմք մը կը ժպտի եւ նշան մը կ'ընէ, իբր թէ բարեւ կուտայ: այդ դէմքը անծանօթ չէ: Մկրտիչ Սինայեանն է: Ծովթիւնէ կը մտնէ այդ վակոնին մէջ: Կը հարնին Սան — Սթէֆանօ, կ'իջնեն վակոնէն եւ ղաշտերու մէջէն ընթանալով կը հասնին պարտէզ մը որոյ մէջ փոքրիկ հիւրանոց մը կայ: Պանք Օթօմանի կը յանձնէ նոցա Յթիւ օրհեակի բանալին: Սենեակին դուռը կը բացուի: Մէկ ժամ վերջ Ծովթիւնէ եւ Մկրտիչ կ'ընթանան կայարանը, ճիշդ ժամանակին երբ այլտի մեկնի չողեկաւորը, առանձին առանձին վակոններ կը նստին: Ծովթիւնէ կ'իջնէ Մաքրի — Գիւղ եւ անդ կայարանին մօտերը կ'սպասէ, կը պտըտի: Ահա՛ կուգայ Պոստի երեւոյեան կառատորմը: Լեւոն կ'իջնէ վակոնէն, կը գտնէ կինն հոն ուրախ զօնարթ եւ միասին կ'ընթանան տուն, եւ հրճուալի ժամեր կ'անցունեն:

Շաբաթը երկու անգամ Ծովթիւնէ ուխտի կը գնայ Սան — Սթէֆանօյի հիւրանոցն, բայց երկու սիրահարներն այնքան փրփրոտ են մինչ իրենց ականջները խուլ են: այն խշրտոցին որ գալարիներուն մէջէն կը լսուի: Չեն տեսներ գլխարկաւոր երիտասարդ մը որ գիրենը կը գիտէ, եւ միշտ կը գեղգեթի հիւրանոցի շուրջն երբ իրենք անդ կը մտնեն կամ անտի դուրս կ'ելնեն: Եւ եթէ գիտէին իսկ, կրնայի՞ն կասկածիլ: Բայց եթէ անգ գտնուէր Պանք Օթօմանի մէջ աշխատողներէն մին պիտի ճանաչէր թէ նոյն ինքն այն երիտասարդն էր որ Լեւոնի յերցակիցն հանդիսանալով պարտուած կը մընար: Այդ օտարազգի միջակիցն, հանաւորէն իւր դժբաղդութեանն ի մահվարութիւն, մի ամսուան արձակուրդ տուած էր եւ կ'ըզօնուէր Սան — Սթէֆանօ: Մի օր կը

նշմարէ ֆոթիւնէն, բայց ուշադիր չը լինիր, ուրիշ օր դարձեալ կը դիտէ եւ հետաքրքրութիւնը կը շարժի: Արդէն Բերա մի քանի անգամներ տեսած էր ֆոթիւնէն երբ նա կը ձեմէր Լեւոնի հետ, հետեւաբար գիտէր թէ որոյ կինն է: Այլ եւս իրեն բան դուրս ըրաւ դիտել լրտեսել հոմանիները, մանաւանդ թէ այդ գրեթէ ամայի գիւղն ոչինչ դրօսանք կար: Լաւ տեղեկացաւ թէ ո՞ր օրերը, ո՞ր ժամուն կը լինէին նոքա ժամադիր:

Երկու շաբաթներ կ'անցնին. մի օր Լեւոն ցերեկէն առաջ գրասեղանին վրայ կը տեսնէ ֆրանսերէն թերթ մը, ուր հատուած մը կարմիր կապարով նշանակուած է. թերթը կ'առնէ եւ կը կարդայ. վերնագիրն էր

ՀՈՎՈՒՆԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ

եւ կը շարունակուէր.

«Վերջի շաբաթներս Բերա բաւական խօսուեցաւ մեծ դրամատան մը «մէջ չայ երիտասարդի մը շուտափոյթ յառաջացման մասին: Ուրիշ երիտասարդ մը «իւր բազմամեայ ծառայութեամբ, իւր «փորձառութեամբ եւ իւր հմտութեամբ «այդ պաշտօնին պիտի կոչուէր, բայց յաղ- «թանակը կը մնար դեռատի գրագրին ո- «րուն իշխանական Լ. անունը անշուշտ չէր «բաւեր այս անյուսալի յաջողութեան հա- «մար: Բայց մի անգամ եւս կ'ապացուցուի «թէ՝ ոչինչ է ծածուկ որ ոչ յայտնեսցի: «Օրինակի համար եթէ վաղը դրօսանայ «համար հետաքրքիր մէկը դէպի Սան-Սթէ- «ֆանօ ուղեւորութիւն մը ընելով մտնէ «պորթի մը մէջ, դեգերի Օթէլ Պ. ի «դրան առաջ, գաղտնիքը կը պարզուի Պիտի «տեսնէ կին մը որ այնքան բաղդաւոր է «(ֆոթիւնէ ֆրանսերէն) մինչ կ'արող կը լի- «նի Հայոց մեծ դրամատէրներէ միոյն չը- «նորհացն արժանի ընել իւր ամուսինը: «Է՛հ, երբ այդ պիտի պաշտպանութիւն մը «վայելել կարելի է, ամէն ինչ յուսալի է: «Միայն թէ զարմանալու չէ որ երբ Պ. Լ. «որսի կ'ենէ ուրիշներու պաշտօնին, ու- «րիշներն ալ որսի կ'ենեն իւր կնոջն:»

Լեւոն կարդաց, լաւ չհասկցաւ, կրկին կարդաց. գոյնը նետեց եւ ընկերակիցներէն միոյն նայելով կ'ըսէր. «Ի՞նչ է այս»: Ընկերակիցն երկու ցուցամատներն գլխուն

վրայ դնելով կ'երեւցնէր զայնս ու կ'ըսէր. «Այսպէս ըրէ, հայրին մէջ նայէ եւ պապասխանը կը գտնես:»

Լեւոն արհամարհական ակնարկ մը ունեցաւ. հասկցաւ թէ ո՞վ էր այդ պոփալի դաւաճանութեան հեղինակն. առաւօտուն նշմարած էր այդ օտարազգին Պանքային մէջ: Ելաւ տեղէն, սկսաւ զնն փնտռել. չգտաւ: Գլխարկը դրաւ եւ մեկնեցաւ առանց հրաման իսկ առնելու: Նստաւ նաւակ մը, անցաւ Սիրքէճի-Իսկէլէսի ուր կը յուսար գտնել իւր թշնամին, վասն զի հաւանօրէն ցերեկի կառատորմով կը մեկնէր նա Ս. Սթէֆանօ, բայց չգտաւ: Շողեկաւորը մեկնելու վրայ էր. Լեւոն տոմսակ մը առաւ Մաքրի-Գիւղի համար, եւ հասնելով անդ շնչասպառ տուն գնաց: Տնեցիք ապ- չեցան տեսնելով զնա այլայլած:

— Ո՞ւր է ֆոթիւնէն, հարցուց:

— Դուրս ելած է:

— Ո՞ւր գնաց:

— Բան մը չըսաւ:

— Մինա՞կ:

— Մինա՞կ:

Լեւոն դռնէն դուրս ցատկեց եւ աճապարանօք կայարան գնաց. հարկ էր քիչ մը սպասել միւս կառատորմին: Քիչ վերջն եկաւ: Լեւոն մտաւ մէջն եւ իջաւ Ս. Սթէֆանօ: Հարցուց այն հիւրանոցն որուն առնուը ակնարկուած էր և առանց շատ դժուարութեան գտաւ: Մօտենալով հիւրանոցին հանդարտ կերպարանք մը առաւ, անտարբեր կերպով մը հարցուց պանդոկապետին թէ այր եւ կին մը որ միշտ կուգան, արդեօք դեռ հո՞ն են: Կարեւոր հեռագիր մը ունէր յանձնելու: Միամիտ պանդոկապետը պատասխանեց թէ կրնայ վեր ելնել եւ թիւ 6 սենեակին դուռը զարնել:

Լեւոն վեր ելաւ յուշիկաքայլ և հասաւ սենեակին դուռը. ոտքերը կը գողգողային, ձեռքը սրտին տարաւ, բաբախումները կարծես արգիլելու համար: Գլուխը ծռեց, ականջը դրաւ դրան: Ֆոթիւնէի ձայնն էր, այո՛, անոր խնդալը: Եւ ի՞նչ խօսքեր զոր չլսելու համար կ'ուզէր ականջները խցել. բայց պարտական էր լսել: Իսկ միւսը, ա՛հ, նա միայն կը խնդար, նորա ձայնը չէր լսեր: Լեւոն այդպէս բառորդ մը կեցաւ: Բէվօլվէր մը չուներ ըովը, կը ցաւէր, բայց

ձեռքի դաւազանը կը բաւէր : Կերպէն դուռը սկսան բանալ, Լեւոն դրան առաջ կայնեցաւ : Դուռը փոթիւնէ բացաւ, եւ երես առ երես եկաւ ամուսնոյն հետ :

— Ա՛հ, սուր ճիչ մը արձակեց կինը եւ հետ մըլուեցաւ սենեակէ : Լեւոն ներս մտաւ եւ դուռը փակեց, բայց կարծես թէ այդ բոլորէն իւր գլուխը ջախջախուած էր երկաթէ թակով մը : այլալոյս ինկաւ աթոռի մը վրայ : Այո՛, նոյն ինքն Մկրտիչ Սինայեանն էր : Փոթիւնէ եւ Մկրտիչ ածապարանօք բացին դուռը եւ դուրս ցատկեցին : Վազեցին կայարանը, անկիւն մը պահուցանեցան, դիտելով թէ Լեւոն կուգա՞յ : Լեւոն չէր երեւեր իսկ : Պոլիս երթալու կառատորմը եկաւ տասն վայրկեան վերջ, նստան եւ մեկնեցան :

Լեւոն այնպէս թմրած մնաց . չէր հասկընար թէ ի՞նչ էր տեսածն, այնքան հեռու էր մտքէն եթադրել թէ իւր կինը Մկրտիչ Սինայեանի տարփուհին կրնար լինիլ : — Բայց չէր կրնար անդ մնալ, ելաւ դուրս : Կարող չէր տեղ մը նստիլ, պէտք էր քալել ինքզինքը ժողովելու համար եւ մտածելու : Ոտք սկսաւ յառաջանալ դէպի Մաքրի-Գիւղ : Օգը զով էր, թեթեւ հով մ'ալ կար, Լեւոն քիչ մը բացուեցաւ, կը մտածէր ի՞նչ ընել : Ի՞նչ ընէր : Պարզ էր ինչ որ պարտաւոր էր ընել . գտնել Սինայեան Մկրտիչն եւ մէկ հարուածով սպաննե՛լ զնա : — Գիւրիին էր մտածել, բայց Լեւոնի սիրտը անընդունակ էր չարութեան : Սպաննե՛լ Մկրտիչը, լաւ, բայց նորա ծերունի հայրն : Երախտապարտութիւնը մեռելական ծանրութեամբ կ'իյնար Լեւոնի սրտին վրայ : Կարապետ էֆ. Սինայեան իւր ընտանեաց բարերարը կը հանդիսանար առանց ո՛ր եւ է չահու ակընկալութեան, կը փրկէր իւր ընտանիքը թշուառութենէ, եւ զինքը կը վերադարձնէր դպրոց . ո՞չ ապաքէն այդքան բարիք զիրենք կարծես թէ նոցա ձորտերն ըրած են : Կ'զգար այդ վայրկեանին Լեւոն թէ աչիւն սրտի մը համար մեծ դժբաղդութիւն մ'է երախտապարտ մնալու հարկին մէջ գտնուիլ : Ա՛հ, եթէ Կարապետ էֆէնտի չահու ակնկալութեամբ չարժած լինէր : Եւ այդ չէր բաւեր : Ահա՛ դուռը մ'ալ պարտական էր Մկրտիչ Սինայեանի : Կ'ըմբռնէր այժմ թէ Մկրտիչ որպիսի՝ ստորին

մտածութիւններէ առաջնորդեալ այդ դուռը մարը փոխ տուած էր իրեն, բայց եւ այնպէս պարտական էր վճարելու, ապա թէ ոչ այդ դուռը պիտի համարուէր իւր պատուոյ դինը : Այո՛, վճարելու էր անմիջապէս, բայց ի՞նչպէս : Ո՛ր կողմ դառնար Լեւոն, չէր կրնար միտքն ամիսիկել, որոշում մը տալ . կը քալէր արագաքայլ, ինքն իրեն խօսելով եւ շարժումներ ընելով : Անցորդները երբեմն կանգ կ'առնուին եւ կը դիտէին զինքը : Միտքը կը թռչտէր Սինայեանէն դէպի Փոթիւնէ, Փոթիւնէէն դէպի Սինայեան : — Այո՛, նախ քան Մկրտիչն սպաննել, իւր դաշոյնը պէտք էր միտքէն կնոյր սիրտն : Այդ մասին մտածել իսկ պէտք չէր : Եւ սակայն այդ բոլորէն աչքին առջեւը կուգար մանկիկն շարժելով իւր թաթիկները : Խեղճ մանկիկ, ո՞րք թողուլ զնա : Եւ այդ չէր բաւեր, սպաննե՛լ անոր ապագայն : Տակաւին օրորոցին մէջ, եւ ճակտին դրօշմէ՛լ մօրը վատահամբաւութեան դրօշմը : Ի՞նչպէս այդ մանկիկն օր մը ճակատը վեր պիտի բարձրացնէ, ի՞նչպէս պիտի կրնայ ամուսնացնել զնա :

Շուարուում, շուարուում, շուարուում : — Բիչ մը նստեցաւ քարի մը վրայ, յոգնութիւն առաւ : Սիրտը ելած էր, թաշկինակն հանեց աչքերը սրբեց եւ վերստին ճանապարհ ինկաւ : Փոքր ինչ հանդարտած էր, սկսաւ խորհիլ : Նախ կարեւոր էր կարգադրել Փոթիւնէի դործն : Ի հարկէ այլ եւս անհրաժեշտ էր ո եւ է յարաբերութիւն իւր եւ կնոյր միջեւ : Սակայն իրենց աղջկան ապագայն կը պարտաւորէր՝ զիրենք ոչինչ յայտնի ընել հրապարակաւ : Եւ ոչ իսկ տնեցիք պէտք է իմանային այդ դաղտնիքն : Առանձնութեան մէջ Լեւոն այլ եւս չպիտի նայէր Փոթիւնէի երեսն, իսկ յաջս օտարաց միշտ ուրախ պիտի երեւէին : Թող մեծնար աղջիկն, ամուսնանար, եւ յետոյ կը մտածէին : Իսկ Փոթիւնէ պիտի դատապարտուէր ճգնաւորական կեանք վարել : Այլ եւս թող մոռնար նա Բերա ընակիլ, ընկերութեանց մէջ մտնել :

Խորասուզեալ այս մտածութեանց մէջ Լեւոն կը մոռնար թէ ի՞նչ պիտի ընէր Մկրտիչ Սինայեանի, բայց հասած էր արդէն տուն : Ներս մտնելով հարցուց անտարբեր եղանակաւ մը .

— Եկա՞ն Ֆոթիւնէն: — Դեռ չէր եկած: Լեւոն վեր ելաւ, անգամ մը զաւակն համբուրեց եւ դարձեալ դնաց կայարանին շուրջը: Իրիկուն եղաւ, մութը կոխեց, Լեւոն եկաւ, քոյրը կ'սպասէր:

— Միասին չէ՞ Ֆոթիւնէն, հարցուց:

Լեւոն պատասխան չտուաւ. ուղղակի սենեակը գնաց եւ ինկաւ անկողնոյն վրայ: Այնը չէր երեւեր, այո՛, կը լքանէր ընտանեկան յարկը. անմեղ Նուարդիկ, ի՞նչ ապագայ կը պատրաստուէր նմա:

Մայրն ու քոյրն եկան իւր քով, գրեթէ կիսամեռ ինկած էր: Այդ երկու տարաբաղդներն ալ լուռ էին: Արդարեւ ոչինչ գիտէին, բայց զգացին թէ մեծ դժբաղդ ութիւն մը կը ջախջախէր Լեւոնը, թէ այդ դժբաղդ ութիւնը Ֆոթիւնէն կը պատճառէր: Նորա չերեւնալն ամէն ինչ կը պարզէր: Մայրն ու քոյրը կը շփէին Լեւոնի ճակատն ու բաղկերակներն: Մի քանի ժամեր այսպէս անցան: Ա՛լ ոչ սեղան գնացին, ո՛չ մի բան ըրին, յուսահատ տխուր նստած էին: Սահակ ազա դուրս ելած էր, չատ մը խմած եւ եկած էր, քիչ մը բան կերած եւ պառկած: Լեւոն բաւական ժամանակ այնպէս թմրած մնալէն վերջ ափիոնը ուղեց, քիչ մը առաւ եւ մտաւ անկողին: Մայրն ու քոյրը կը հսկէին իւր քով:

Ի՞նչ կ'ընէր այդ միջոցին Ֆոթիւնէն: Ինքն եւս նուազ դժբաղդ չէր: Փախչելով Սան – Սթէֆանօյի հիւրանոցէն մտած էին վակօնը, առաջին կարգն, եւ ինքն ու Սինայեան միասին նստած էին. լուռ կեցան մինչեւ Մաքրի – Գիւղ: Երբ հասան Մաքրի – Գիւղի կայարանը Մկրտիչ փութաց բանալ վակօնի դուռը. բայց Ֆոթիւնէն անշարժ նստած էր:

— Ձե՞ս ելներ, հարցուց Մկրտիչ:

— Ելնեմ ի՞նչ ընեմ, այլ եւս կարելի՞ է անոր քով երթամ:

Մեկնեցաւ շոգեկառքը: — Ի՞նչ փորձանքի հանդիպեցանք, կ'ըսէր ինքնիրեն Մկրտիչ: Ի՞նչ ընէր հիմա այդ կինը: Նաեւ, Սինայեան այդ վայրկեանին խղճահաւրութիւն ունէր, ամօթահար էր Լեւոնի քով: Ի՞նչ կ'ուզէր այդ խեղճ տղայէն որ դժբաղդ ըրաւ զնա: — Այդ վայրկեանին կ'ամնար այն բարութիւններէն զոր հայրն ու ինք ըրած էին Լեւոնի եւ նորա ընտան-

եաց: Իսկ եթէ Լեւոն յանկարծ ուզէ վերէփնդիր ըլլալ, որպիսի՛ խայտառակութիւն: Բայց այդ ետքը մտածելու խնդիր էր, առ այժմ պէտք էր բերը թեթեւցնել, բան մ'ընել Ֆոթիւնէին: Միասին պորտոցընել, անկարելի. տո՛ւն տանիլ, անկարելի. խօսք հասկցնել, անկարելի: Ի՞նչ ընէր, ի՞նչ ընէր: — Այս միջոցին շոգեկառքը հասած էր Գում – Գաբու. այն բողբոջն ուր պիտի մեկնէր, Մկրտիչ բացաւ վակօնի դուռն եւ դուռն ցատկեց:

— Ջուր մը խմեմ գամ, ըսաւ: Եւ դուռը փակեց դռնէն:

Շոգեկառքը մեկնեցաւ. Ֆոթիւնէն ահաբեկ էր: Տասը վայրկեան վերջ կ'իջնէր Ֆոթիւնէն Սիրեճի կայարանը: Երբ թէ իւր հոգերը չէին բաւեր, տոմսակի խընդիր ծագեցաւ. տուգանքը տալով ազատեցաւ: Կայարանին մէջ նայեցաւ չորս կողմն, ի զուր կ'որոնէր. չէր կարող նշմարել Սինայեանի դէմքը: Կամաց կամաց հեռացաւ, գնաց մինչեւ կամուրջ, կը նայէր չորս կողմը՝ ոչինչ: Եթէ համարձակէր պըրպըտել աչքերով անցնող կառքերը, պիտի տեսնէր միոյն մէջ կծկուած Մկրտիչ Սինայեան. կուգայ կամուրջ, շոգենաւին մօտ կ'իջնէ կառքէն, կը մոնէ շոգենաւն եւ մինչ Ֆոթիւնէն զնա կ'որոնէ, նա արդէն Վոսիորի հովերը կը վայելէ: Ֆոթիւնէն թէպէտ սրտատանջ կասկածներով կը տառապէր, բայց տակաւին չէր համարձակեր համոզուիլ թէ՛ Սինայեան լքած էր զինքն: Կամուրջին վրայ բաւական ժամանակ կայեցաւ գէպի Ոսկեղջիւրի կողմն, ուր հոծ բազմութիւն չկար: Կսպասէր ու կ'սպասէր, կը դիտէր ու կը դիտէր. ոչ ոք կ'երեւէր: Վոսիորի շոգենաւները կը մեկնէին մի առ մի ուրախ գուարթ բազմութեամբ լեցուն: Ոնտարակոյս այդ շոգենաւներուն մէջն էր նաեւ Մկրտիչն: Իսկ ի՞նքն. անհուն ախրութիւն մը գրաւած էր իւր սիրտը: Ի՞նչ ըրած էր որ Աստուած զինքն այսքան դժբաղդ կ'ընէր: Վայրկեան մը ուղեց ծոփն իյնալ և ազատիլ, բայց այն հեշտաբայր երեկոյներէն մին էր ուր ամենէն թշուառ մարդն իսկ ապրիլ կը սիրէ: Արեգակն Ոսկեղջիւրէն մոտեցելով իւր վերջին ճառագայթները կը ցլանային Իսկիւտարի ջրայ, ուր տուններու պատուհաններն ոսկե-

գոյն ներկուած աննման փայլով կը փայլէին : Ոսկեղջիւրի կողմէն արեւմուտքն խանդաղատիչ էր . երկինքն մութ կանանչ ու կարմիր կը ներկուէր : Գորովայր, հրապուրիչ բռնութիւնը կեանք կը սփռէր : Երբ այլ եւս չոգենաւ չմնաց, Փռութիւնէ կորոյս յետին նշոյն իսկ յուսոյ եւ գլուխը կախ կը յառաջանար : — Ո՛ր կ'երթար : Գիտէ՞ր արդեօք ինքն : — Վայրկեան մը մտածեց երթալ ուղղակի Սինայեաններու տունը : Բայց ի՞նչ ընելու, եւ ի՞նչ ըսելու : Խոնարհաբար իւր անպատուութիւնը Տիկին Հերիգայի աչաց առջ պարզելու համար : Բայց խելքը ո՛ր էր : Հէքիգայ միթէ Բերա՞ էր, նա այժմ Եէնի-Գիւղ ծովափերեայ ապարանաց պատըզամն ամուսնոյն հետ նստած կ'զբօսնուր : — Ե՛տ դառնալ ամուսնոյն տունը : — Ինչո՞ւ համար . շան պէս վռնտուելու կամ թէ սպաննուելու : Եւ եթէ ներողութեան իսկ արժանանար, ինչ որ յուսալի չէր, ի՛նչպէս խոնարհ, ի՛նչպէս ստորուկ պիտի լինէր կեսքովը քով : — Կըրնա՞ր ծնողացը տունն երթալ . ի՛նչ ըսելով : Ի՛նչպէս Կօչկակարին խիստ դէմքը նայիլ : — Ո՛ր նստիլ, ո՛ր պառկիլ, ի՛նչ ուտել : — Իւր ամուսնանալէն ի վեր ծնողքը դարձած էին իրենց հին խրճիթը : Կը ստկար Փռութիւնէ մտքը բերելով աղջկութեան նսեմ օրերն : — Եւ ի՞նչպէս ապրիլ : Ո՞ր ընտանեաց մէջ մուտք կարող էր գտնել վատահամբաւեալ կին մը . բայց ահա յանկարծ իւր շատ մօտէն ձայն մը կը լսէ, ծանօթ ձայն մը : Զորս կողմը կը նայի : Այո՛, նոյն ինքն է, կայնած նպարալաճառի մը կրպակին առջեւ բարձրաձայն կը վիճի սակարկութիւն ընելով, ձերմակ պարկը բացած : Ազատ չունչ մը քաշեց Փռութիւնէ, ի՛նչպէս չէր մտածած : Դուտ կ'երթայ անոր քով :

— Բարի իրիկուն, Աբրահամ աղա :

— Օ՛, դուն ես, Աստուծու բարին . խեր ըլլայ . այս ատեն այս տեղուա՞նքը :

— Կը պատմեմ . այս գիշեր քեզ հիւր պիտի ըլլամ :

— Բարով, հապար բարով :

Աբրահամ աղա շուտ վերջացուց կռիւը և գնացին . անհամբեր էր խանալու : Փռութիւնէ ճիշդը չըսաւ : Ըսաւ թէ կեւրոյն հետ կ'ելլէ քրած էր : ամուսնին ալ մօրը կողմնակցութիւն քրած լինելով ինքն ալ ձգած

փախած էր : Ի հարկէ Աբրահամ աղա Փռութիւնէի իրաւունք կուտար : Այն գիշերը Փռութիւնէ անցուց Աբրահամ աղայի տունը . այնքան անհանգիստ եղաւ որ յաջորդօրն այլ եւս չէր կրնար անդ կենալ : Իւր քովն ունէր ժամացոյցն եւ մատանի մը զորս ծախել տուաւ Աբրահամ աղայի ձեռք : մեծ գումար մը չը բռնեց, բայց իրեն կը բաւէր մէկ ամսոյ չափ : Դնորհիւ Աբրահամ աղայի կրցաւ գտնել այնպիսի տուն մը ուր բաւական բարեկամուհիներ կային, որք կ'աւրէին առանց բողբոջին վատահամբաւեալ լինելու : Այն օրն ուր մտաւ այդ տունը, կորստեան անդունդը չէր ինկած, բայց կը դեղերէր անդունդին եզերքը : — Զհետեւինք այլ եւս իրեն, թողունք զինքն այդ տունը, հետամուտ նոր Սինայեաններ ձգելու իւր ճանկերուն մէջ և վերադառնանք Մաքրի-Գիւղ Լեւոնի անկողնոյն մօտ :

Առաւօտուն երբ արթնցաւ Լեւոն, այն վիճակին մէջն էր որ անկողնէն չէր կարող ելնել : Քիչ մը նստեցաւ, բայց շուտ ինկաւ, գլուխը կը դառնար : Մայրն ու քոյրն եկան, Նուարդն ալ բերին, Լեւոն նայեցաւ մանկիկին վրայ, բայց ո՛չ գգուեց, ո՛չ սիրեց : Ահաբի տարակոյս մը ծնունդ առած էր իւր մտաց մէջ : — Իւր վաւա՞կն էր արդեօք : — Այդ տարակոյսը բողբոջին ջլատեց Լեւոնը . յուսահատ եւ տրտմած անկողին մտաւ վերստին : Հարկ եղաւ բժիշկ բերել . բժիշկը ոչինչ կրցաւ ըսել ստոյգ . կարծեց թէ ջերմ լինելու է :

Սահակ աղա գնաց Պանք Օթօման իմաց տալու թէ Լեւոն հիւանդ է, մի քանի օր չպիտի կրնար երթալ : Ետբայ մը այդպէս անցաւ, Լեւոն քիչ կը խօսէր, միշտ տխուր էր, միայն անդադար ափիոն կը գործածէր : Հարկ եղաւ ուրիշ բժիշկ բերել Բերայէ . խորհուրդ ըրին, երկար բարակ քննեցին եւ երբ իմացան թէ մեծ ցնցում մը ունեցած էր, կարծիք յայտնեցին թէ ուղեղի հիւանդութիւն մը կը տեսնուի : Ամբողջ ամիս մը Լեւոն տունը կեցաւ . քիչ անգամ դուրս կ'ելնէր, որչափ հնար է քիչ կը խօսէր : Երբ ամիսը լրացաւ ուղեց գործի երթալ : Գնաց գործին եւ շարունակեց, բայց կը տեսնէին թէ շատ սխալներ կ'ընէ, խելքը վրան չէ : Հարկ եղաւ ըսել իրեն որ քիչ մը ատեն եւս հանգիստը նայի մինչեւ լաւ մը առողջա-

նայ : Քանի մը ամսուան համար արձակուրդ տուին :

Արձակուրդի ատենը լրացաւ , բայց Լեւոն կարող չեղաւ վերադառնալ : Սիտքը չիոթ էր , կարծես մուշկով պատած : Պանքային կողմանէ մեծ բժիշկ մը եկաւ , ըննեց զննեց եւ տեղեկագիր տուաւ թէ այդ երիտասարդին վրայ մտաւոր խանգարման մը նշանները կը տեսնուէին : Հոգեկան տառապանքներ , յանկարծական ցնցումներ խանգարած էին նորա միտքն : Այլ եւս պէտք չէր յուսալ թէ նա կրնար գործին օգտակար լինել : Այդ տեղեկագիրն վրայ Լեւոնի նախկին մրցակիցն նորա պաշտօնին կոչուեցաւ : Իսկ Լեւոնի փոքր գումար մը ամսական յատկացուեցաւ մինչեւ որ առողջանար եւ գործի սկսէր : Ժամանակը կ'անցնէր եւ օր ըստ օրէ Լեւոն կ'լցնար : Ոչ մէկ բանի ուշադիր էր . ժամերով կը նստէր պատուհանը եւ անթարթափ աչքերով կը նայէր հեռուն , անհուն ծովը : Երբ դուրս ելնէր մայրը կամ քոյրը միշտ հետն էին : Գլուխը կախ էր . աչքերը փոս եղած , դէմքը դեղնած : Կը քայլէր դողդոջուն քայլերով :

Երբ Լեւոն այսպէս կը պտըտէր փողոցները , տղաքները կը վախնային : Դպրոցին աշակերտները կը տեսնէին զնա շատ անգամ երբ երեկոյները կ'ազատուէին դըպրոցէ : Ապուշն է , ապուշը կ'ըսէին եւ կը փախչէին :

Այլ եւս բոլորովին հաստատուեցան Մաքրի-Գիւղ :

Մախեցին ինչ որ ունէին Բերայի տան մէջ , ըիջ մը բան պահեցին իրենց : Քանի մը ամիսներ վերջ Պանքայէ այլ եւս ամսական չտուեցաւ Լեւոնի : Մերթ ընդ մերթ Սինայեան Մկրտիչ բան մը կը խրկէր : Լեւոն հետզհետէ անձանաչ կը լինէր : Տան մէջ եւս երկիւղ կ'աղղէր , կ'երկնչէին որ աղջկանը օր մը մլատ չհասցնէ , վասն զի միշտ կը նայէր նմա սարսափ ազդելու նայուածքներով : Արդէն Սահակ աղա բանի մը օգտակար չէր : Լեւոնի մայրը հիւանդութիւն տկար կին մը եղած էր . ո՞վ կրնար այդքան տառապանաց տոկալ : Լեւոնի քոյրը տան աղախինն էր : Ո՞ր մէկուն հասնէր : Տունը կը նայէր , կերակուրը կ'եփէր , մանկիկը կը խնամէր , հիւանդները կը նայէր : Դրացիները միջամտեցին , խորհուրդ տուին

որ Լեւոնը հիւանդանոց դնեն : Լեւոնի քոյրն աղաչանաց նամակ մը գրեց Սինայեան Մկրտիչի խնդրելով նորա պաշտպանութիւնը : Սինայեան նուէր մը խրկեց , եւ միջնորդեց Հիւանդանոցի հոգաբարձութեան Լեւոնն Հիւանդանոց ընդունելու :

Ստէպ ստէպ Լեւոնի ընտանիքը կ'երթային զնա տեսնելու : Նստած էր Ապուշարանը , ճերմակ զգեստներ հագած , գլուխը միշտ կախ : Ակուայները թափած էին , մազերը ճերմկցած :

Իսկ Յօսթիւնէ ի՞նչ կ'ընէր : Լաւ է նորա ետեւէն չ'երթալ , չ'փնտռել :

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

Վ Ե Ր Զ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԽԱՐԵՆՐ

Ազգային նշանաւոր վիպասան և անուանի պատմաբան Պ. Բաքճի ծանօթ է անշուշտ բոլոր Ազգայնոց իւր գրական երկերով : Դեռ վերջերս « Արեւելք » ի մէջ դրուեցաւ իւր « Խամսայի Մելիքութեան » մէկ քաղուածը , որոյ վերջաբանը կարծեմ անծանօթ մնաց ընթերցողներուն , վերջաբանն որ սակայն պատմութեան չափ հետաքրքրական էր՝ պատմութեան աղբերաց հետախոյզ նկարագիրը լինելով : Պ. Բաքճի նոյն պատմութիւնը գրելու համար թէ որչափ երկար ժամանակ դեղերի է անհատ եւ աննկուն , մարդ կը զարմանայ երբ կարգայ այդ վերջաբանն եւ մանաւանդ երբ հասու լինի թէ Պ. Բաքճի այդ ժամանակակից պատմութիւնը գլխովին ի լոյս հանած է հին ձեռագրոց յիշատակարաններէ , արձանագրերէ , տապանագրերէ եւն . զորմէ գոյնաւոր հիւսել նպատակէս դուրս է . այլ այդ վերջաբանին մէջ Պ. Բաքճի կ'աղաչէ իր ընթերցողները որ եթէ երբեք հանդիպին այնպիսի հին ձեռագրոց յիշատակարաններու , որ վերաբերութիւն ունենան Խամսայի Մելիքներու պատմութեան , զանոնք կամ խոստովութեամբ եւ կամ ընդօրինակութեամբ առ ինքն հասցնել շնորհեն :

Յետագայն դրադարանիս մէկ հին ձեռագիր գրքի մը յիշատակաբանին ճիշդ ընդօրինակութիւնն է , որ Նախջեւանի Ագուլիս գիւղաքաղաքին մէջ տեղի ունեցած եղբարկան անցից պատմական նկարագիրն է եւ որ կը վերաբերի Պ. Բաքճիի պահանջման , զոր

ի հրատարակութեան կը յանձնեմ, յուսալով որ մեծանուն պատմաբանին ձեռքը կը հասնի:

Յիշատակարանիս եղբրական անցքերը տեղի ունեցած են 1730 թուականին Աղուանից ցեղակից «Ազատ խան» անուն մարդանախանձ բռնաւորին ձեռամբ: Խամայի Մեղիբուծեանց պատմութեան մէջ, Պարոնից կուրացեալ Շահ Բուխ թագաւորի ժամանակ ըմբոստացեալ Ազատ խան անուն բռնաւոր մը յիշուած է, սակայն յիշատակարանիս ծանուցած եղեռներն նմա չեն վերադրուած: Հաւանորէն յիշատակարանիս մէջի Ազատ խանն եւ խամայի Մեղիբուծեանց պատմութեան մէջ յիշուածն միեւնոյն անձն լինելու է, քանզի Շահ Բուխ տիրապետութեան եւ Ազատ խանի բռնակալութեան թուականները մերձաւոր եւ ժամանակակից են միմեանց, որոց հետախոյզ քննութիւնը կը թողուի Պ. Իսֆֆէի եւ այլոց ազգային ներհուն պատմաբանից:

Մ. ԽԱՉԻԿԵԱՆ

Մ Ո Ւ Ք Ե Ն Կ Ո Մ

Ի ՎԵՐԱՅ ԳԻՒԴԱՔԱՂԱՔԻՆ ԱԳՈՒԼԵԱՅ

ՈՐՈՒՅԻ ԼԻՆԵԼՆ

«Աւա՛ղ կարդալով սգալից սրտիւ արտասուածոր աջօք եւ թարչամեալ բերանով, վա՛յ տալով յանձինս՝ մեր, յայտ առնեմ սիրելի հարցդ եւ եղբարցդ, եւ ի սմա հանդիպողացդ ամենեցունցդ յայտ իսկ է. որ յերկրին Արեւելեան յառաջմանէ էին փարթամ հարուստ եւ ամենայն ընչիւր ճոխացեալ եւ բազում զանազանիւր զարդարեալ. եւս առաւել յերկրին Նախիջևանու եւ ի գիւղաքաղաքն Ագուլիս. որ սա էր յոյժ եւ ամենայնիւ պերճացեալ ճոխացեալ եւ առատացեալ եւ յայս գիւղաքաղաքում, կայր կառուցեալ սրբաշէն գմբէթով եւ խաչ գլխուն կանգնեալ եկեղեցիք, որոյ յատկապէս ծանուցանեմ որքան լինելն, եւ որում անուամբ կառուցեալն նախ՝ Աթոռն մեր, որ է բազում սլայծառութեամբ շինեալ եւ գահիւր զարդարեալ եւ անուամբ սրբոյն Թովմայի Առաքելոյն կառուցեալ, որ զայս Ս. տաճարիս փառաբանիչն էին սեւագլուխը եւ ի գաւառին Գողթնեաց. Հովնապետ եւ Առաջնորդ կարգեալն ի սմա բնակէր: Երկրորդն է, սրբոյն Յովհաննու Մկրտչին անուամբ կառուցեալ: Երրորդն սրբոյն Առաքելոյն Շմաւոնի: Զորրորդն սրբոյն Յակովբայ Առաքելոյն Ալիեան: Հինգերորդն սրբոյն Փրիստափորին: Վեցե-

րորդն սրբոյն Ստեփաննոսի նախավկային: Եօթերորդն սրբոյն Մինասայ Զօրավարին, որ այսօրիկ էին բազում զարդուր զարդարեալ եւ ամենայնիւ բարութեամբ լցեալ եւ անօթիւր ճոխացեալ. որ միշտ Ս. խորհուրդն եւ ամենայն փառաբանութիւն կու մատուցանէին տիւ եւ գիշեր. եւս այլ կայր չեղր գիւղիս կառուցեալ անուամբ Ս. Աստուածածնայ, որ այս Ս. տաճարս է տեղի ունիտից, որ ամենայնում աւուր փառաբանութիւն կատարի. կայ եւ ի մէջ գիւղիս կառուցեալ տաճար՝ կրկին անուամբ սուրբ Աստուածածնայ որ եւ աստի կուսանաց երգս ելանէ: Եւս կայ փոքր տաճար անուամբ սրբոյն Ամենափրկչին. կայ եւս փոքր տաճար անուամբ սրբոյն Յակովբայ Մճնայ Հայրապետին, որ այս գիւղս այսպիսի բարիք ունելով, իբր տկարացեալ կեանք կենցաղավարի, բայց մեք հպարտացեալքս եւ գոռոզացեալքս լցաք ամենայնի չարութեամբ որ սիրտը մեր բնակարան սատանայի արարաք եւ Աստուածայինսն մոռացաք, այլ միշտ սատանայի հետեւեցաք, վասն որոյ ամենազօրն Աստուած սաստկացաւ ի վերայ մեր. այսինքն՝ նախ ետ ի ձեռս անիրաւ դատաւորաց, որ միշտ հարկապահանջութեամբ վշտացուցանէին եւ պէս պէս տառապանս յարուցին ի վերայ մեր. բազում արք եւ կանայք ի ներքոյ փայտի մեռան, եւ բազումք եւս ցիր եւ ցան եղեն. իսկ մեք մնացորդքս եղաք չքաւորք. սակայն այլ ոչ դարձաք ի մեղաց մերոց, կրկին եւս անօրինաբար վարեցաք, որ եւ Աստուածն ամենայն ետ սաստկութիւն, այսինքն սով եւ սղութիւն որ եւ բազումք եւս եղեն սովամահ. իսկ մեք յիմարացեալքս կրկնապատիկ յառաւելացուցաք զանօրէնութիւնս մեր, որ ամենայնի բարեացն հեռացաք եւ ի պէս պէս մեղօք շաղախեալ եղաք, եւ Արարիչն մեր կրկին ձանձրացուցաք որ առաւելապէս բարկութեամբ շարժեաց որ Աստուածասաստ պատուհասն ետ, որ եւ ի սմին ամի ոչ գոյր թագաւոր յերկրի մեքում, բայց մի ոմն ի մարդագէտ գաղանից անիրաւ դատաւոր եւ սաստիկ պահանջող եւ քարասիրտ բռնաւոր որ եւ լի ամենայն չարութեամբ ի ցեղէն Աղուանից Ազատ խան կոչեցեալ, որ եւ սա էր յերկրին տիրապետ. Աստուածն հզօր մատնեաց ի ձեռն սորա,

որ այս պատահաւոր գազան բազում հե-
ծելօք եւ անթիւ զօրօք թօփիւք եւ թօփ-
խանօք եկն ի վերայ ոգով լցեալ գիւղիս Ա-
գուլեայ . թէ նոյնպէս կայր ի քաղաքի մե-
րում բազում մարտնչողք . բայց Աստուած
մեր բարկացեալ էր . ոչ ետ հանդուրժել
այլ սաստկացոյց սիրտն անօրէն բռնաւո-
րին որ ի մէջ երրորդ ժամուն , Ս . տաճա-
րըն քայքայեալ ջախջախեցին , եւ սրբոց
մաքուր մասունքն ամենայն գերեցին .
փառաբանչաց բազումն սուր սուսերի ա-
րարին , եւ անթիւ քրիստոնեայք արք եւ
կանայք , երիտասարդք եւ մանկունք սրով
անցուցին , որ զամենայն հողն արեամբ
ներկեալ չաղախեաց , եւ զաւուրս երիս
զայս գիւղս բնակեցան . թէ եկեղեցիք եւ
թէ բնակութիւնք ամենայնի մերկացուցին
որ իբր մերկ ի մօրէ ծնեցեալք եւ յետ այս-
քան սրախողութեան յետ մնացեալ քրիս-
տոնեայքն կողոպտաբար գերեցին , որ թէ
ողորմելի Ագուլեայ եւ թէ բոլոր շրջակայ
գիւղօրէիցն մինչ ի ՌԲՃ քրիստոնեայ գե-
րեցին , եւ Ս . տաճարըն խանգարեցան եւ
եղեն անմարդաբնակ իբր թէ տասն ամեան
աւերեալ . որովհետեւ այսպիսի բարկու-
թիւն եկն ի վերայ մեր . ուրեմն պարտիմք
մեք չարեօք լցեալքս եւ մեղօք չաղախեալքս
դառնամք ի մեղաց զղջամք եւ մեղայ դո-
չեմք , և մեր զանօրէնութիւն լալպին խոս-
տովանիմք որ զԱստուածն ամենայնի գութ
չարժէ , որ մեր գերեացն ազատութիւն
պարգեւէ :


Եւ այս եղիելի սուգս եւ անխորժելի
տառապանս եւ աններելի ցաւքս եւ ան-
բժշկելի վէրք եկն ի վերայ մեր ի թուա-
կանիս մերում ՌՄ յամսեանն Հոկտեմբերի
ԺԲ եւ օրն չարաթ :

ՆԵՐՍԷՍ Ե . ԱՇՏԱՐԱԿԵՑԻՈՅ

Մ Է Կ ԿՈՆԴԱԿԸ

Ներսէս Ե . Աշտարակեցի կաթողիկոսին հետեւ-
եալ ինքնագիր կոնդակն իբր օրինակ հեռատեսու-
թեան եւ վեհանձնութեան հրատարակութեան կը
յանձնեմ , ընդօրինակելով զայն բուն իսկ ձեռագրէն ,
որ տեղէ մը դիպուածով ձեռքս անցած մասունքի
պէս կը պահուի քովս :

Յ . ԹԱԹԱՐԵԱՆ



Ներսէս ծառայ Գրիստոսի եւ անհասա-
նելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ
եւ կաթողիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն
Պատրիարք համագգական նախամեծար Ա-
թոռոյ Արարատեան Մայր եկեղեցւոյ Սըր-
բոյ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱՇՄԻ : Շնորհունակ
կարապետ վարդապետ . զառանձնագրու-
թիւնն եղեալ ի գրութեանն առանց հա-
մարոյ պարունակութեամբ բազում ծանօ-
թութեանց ընթերցայ . վասն քահանայից
կարգեցելոց յայլ եւ այլ տեղիս անվայելչա-
կան գործոց հարկ է ունել վճռուեալու-
թիւն վասն ոչ պակասեցուցանելոյ զմիթա-
րութիւն ժողովրդեան . այլ եւ վասն ան-
ծանօթ իւրեանց քահանայական պարտա-
ւորութեանց խորհելոցն վասն անձանց մի-
այն կամ վասն ընտանեաց իւրեանց այնօ-
րինակ յայտնեալ զանցառութեանց նոցա
զօրինօք քահանայութեանց իւրեանց եւ
զհրամանօք կառավարութեանն , հարկ է ու-
նել ի նպատակի մտաց զօրինակ թաղելոյն
զայգիս , զի թաղեն զորթն վասն ոչ ցրտա-
հար լինելոյ , այլ զգուշանան դարձեալ , զի
վասն պահպանութեանցն ի ցրտահարու-
թենէ , չունիցին ընդ թաղելն զուռն բե-
կանել , որ միեւնոյն փնաս ուռոց խաղողոյ
յառաջանայ նախ քան զժամանակն ցրտա-
հարութեամբ ցամաքելոյ : Մինչեւ դաստիա-

րակեսցին հոգեւորականք Հայոց, հարկաւոր է իշխանութիւն հանդերձ առաւել զգուշութեամբ :

Յայտնեա առանձնութեամբ Տէր Եսայուն սիրեցելոյն ի մէնջ, թէ հակառակութիւն նորա ընդ Տէր Ղազար Աւագ-քահանային ի մասին վերատեսչութեան բարեկարգութեան պատուաւորութեան նորա, ո՛չ վերաբերի առ Տէր Ղազարն, այլ առ մեզ որ կարգեալ ունիմք զնա յայնմ պաշտօնի, եւ զինքն յիւրում պաշտօնի աւագերիցութեան եւ ատենակալութեան ի Կօնսիստօրի որոց իւրաքանչիւրոց պարտաւորութիւն է կատարել զիւրեանց պաշտօն առանց հակառակութեան միմեանց : Ըստ որոյ թէ Տէր Եսային ոչ թողուցու զհին սովորութիւնն անսահման բերմանց առ միմեանս, տրտմեցուցէ զիս եւ զինքն ի զուրամենեւին . զի ո՛չ վասն սիրոյ եւ ո՛չ վասն ատելութեան չեն իմ կամք թողուլ ի վրտանգի զընթացս կառավարութեանց ի հաճոյս սիրելեաց կամ ատելեաց :

Յաղաքս երկուց այնոցիկ յետս կացեալ լինելոյն ի պարտաւորութեանց անտի ուսումնարանական խորհրդականութեանց չէ արժան զգալն անգամ . զի ոչ պակասին ուսումնարանական կառավարութեանց խորհրդականք :

Կաթուղիկոս ամենայն Հայոց

ՆԵՐՍԷՍ

1848 եւ ազգական 1297

Հոկտեմբերի 22 ի Ս . Էջմիածին

Համար 263

Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՄԻ ՏԱՐԻ ՇՎԷՅՅԱՐԻԱՅՈՒՄ

(ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ՆԵՐ)

« Մշակ » ի խմբագիր Պ . Գրիգոր Արծունի սկըսած է իւր լրագրի մէջ մաս առ մաս հրատարակել այն տպաւորութիւններն զորս ունեցած է, մինչ իւր լրագրին դադարման ժամանակ Զուիցերիա կը գլուխուէր : Գաղափար մը տալու համար այդ յօդուածոց վրայ, այսօր կ'արտատպենք անոնց մի մասն :

Զարմանալի է հոգեբանական որքան նըրբութեամբ է վերաբերվում չվէյցարական թէ ընտանիքը եւ թէ դպրոցը դէպի նոր սերունդը, նրա թէ մանկական, թէ պատանեկան եւ թէ, վերջապէս, երիտասարդական հասակում :

Մի ամբողջ տարի անցկացրած լինելով Շվէյցարիայում, ես առիթ ունեցայ ծանօթանալ երկրի հասարակական եւ ընտանեկան այլ եւ այլ շրջանների հետ, առիթ ունեցայ հասկացողութիւն կազմել այն ոգու մասին, որ տիրում է չվէյցարական թէ սկզբնական, թէ միջնակարգ եւ բարձրագոյն դպրոցներում : Հետեւենք չվէյցարացի հասակ առածների վարմունքին ու նրանց յարաբերութիւններին դէպի նոր սերունդը, սկսած նրա մանկական հասակից, անցնելով նրա պատանեկան հասակը եւ վերջացնելով նրա երիտասարդական հասակով, — եւ կը տեսնենք որքան խելացի, խոր եւ նուրբ հոգեբանական զգացումներ, որքան առողջ լոգիկա կայ հին եւ նոր սերունդի փոխադարձ յարաբերութիւնների մէջ :

Շատ անգամ ես զմայլված եմ մնացել այդ յարաբերութիւններով եւ ակամայ յիշողութեանս մէջ ինձ ու ինձ համեմատել եմ մեր երկրի հասակ առածների անարդար եւ վտանգաւոր յարաբերութիւնները դէպի մեր նոր սերունդը, չվէյցարական հին եւ նոր սերունդների խելացի եւ զգոյշ փոխադարձ յարաբերութիւնների հետ :

Մեզանում եւ Ռուսաստանում ընդունուած է ընտանեկան շրջաններում անդուշաբար ամեն բանի վրայ խօսել երեխաների ներկայութեամբ՝ եւ քաղաքականութեան վրայ եւ այս կամ այն հասարակական պակասութիւնների վրայ, եւ քաղաքային բամբասանքների վրայ : Մեզանում երեխաների ներկայութիւնը հասակ առածներից կատարելապէս անտես է առնվում . նրանց առջեւ դուք ձեզ թոյլ էք տալիս եւ քննադատել ամեն բան, եւ պատմել շատ անգամ ոչ շատ բարոյական պատմութիւններ, եւ յայտնել ամենածայրայեղ, արմատական մտքեր, եւ վիճել բարձր հարցերի վրա..... Երեխաները այդ բոլորը լսում են, նրանց փափուկ, զգայուն, բայց շատ անգամ սրտալ կերպով ըմբռնող ուղեղի մէջ այդ բոլորը տպաւորվում է : Եւ ինչ զարմանալի

բան է, եթէ մեզանում երեխաները իրանց հասակից վաղ հասունանում են, վառված են ինքնուր չափ անգամ այնպիսի գաղափարներով, որոնք իրանց հասկացողութիւնից բարձր են, չափ չուտ կշտանում, յոգնում են կեանքից, նրանց մէջ այլ եւս չէ մնում մանկական անմեղութիւն, միամտութիւն, ուրեմն կենսատու թարմութիւնը:

Շվէյցարիայում այսպէս չէ: Դուք նստած էք շվէյցարական մի որ եւ է ընտանեկան մասնաւոր շրջանում: այդտեղ կան եւ պարտններ եւ տիկիներ, եւ ծերեր, եւ երիտասարդներ ու օրիորդներ: Խօսակցութիւնը ընդհանուր է. խօսվում է կամ հասարակական մի անցքի, մի երեւոյթի մասին, կամ քաղաքականութեան մասին, կամ վիճաբանվում է մի բռնանի, մի թաւրօնական գրուածքի հոգեբանական կամ բարոյական կողմի մասին, վերջապէս խօսակցութիւնը ընդունում է թեթեւ, դուրեկան, սալօնական բնաւորութիւն: Յանկարծ մտնում են բնակարանի միւս սենեակներից տան երեխաները, կամ նոր եկած հիւրերից մէկը մտնում է մի երեխայով, — եւ ահա ամբողջ խօսակցութիւնը կ'տրվում է, ուրիշ կերպարանք, ուրիշ բնաւորութիւն է ստանում: Բաւական է հասակ առածների բազմաթիւ շրջանում մի մանուկի երեւալը, որպէս զի թէ ծանր քաղաքական, գրականական, գիտնական, կամ թեթեւ սալօնական, չափ անգամ ոչ չափ բարոյական խօսակցութիւնը ընդմիջվի, կտրվի, վերջանայ, կարծես մի տեսակ դիւթական ոյժի յանկարծական ներգործութեամբ: Այդ դիւթական ոյժը, խօսակցութեան այդ յանկարծական ընդմիջվելու, փոխվելու, ուրիշ բնաւորութիւն ընդունելու պատճառը՝ երեխայի երեւալն է հասակ առածների շրջանում: Մի երեխայի երեւալով հասակ առածների ամբողջ շրջանը անմիջապէս փոխում է իւր խօսակցութեան առարկան, մանուկների ներկայութեամբ բոլորը անմիջապէս թողնում են մի բօպէ առաջ իրանց հետաքրքրող խօսակցութեան առարկան, մանուկների ներկայութեամբ բոլորը աշխատում են մանկան համար հասկանալի եւ մատչելի խօսակցութեան մի նոր թեւ կապել, երեխաների ներկայութեամբ բոլորը անմիջապէս աշխատում են երեխաների հետ

և երեխաների համար իրանք էլ երեխայ դառնալ: Հէնց որ մի երեխայ մտաւ սենեակը՝ հասակ առածները անմիջապէս թողնում են իրանց առաջվայ խօսակցութիւնը եւ աշխատում են երբէք չը խօսել մանուկների առջեւ այնպիսի հարցերի մասին, որոնք կարող են կամ գրգռել նրանց գաղափարները, կամ վառել նրանց երեւակայութիւնը, առ հասարակ նպատակ նրանց մտաւոր եւ բարոյական վաղահասութեանը:

Անցնենք տարրական դպրոցը, — եւ դուք այդտեղ էլ կը հանդիպէք նոյն երեւոյթի:

Մեզանում հիանում, զմայլվում են վաղահաս երեխաներով, Շվէյցարիայում վաղահաս երեխան համարվում է մի անբնական, անառողջ, մեղասակար հոգեբանական երեւոյթ: Եւ հէնց որ շվէյցարացի մանկավարժը նկատում է իր սաների թւում մի արտաքին կարգի երեխային, որ գերազանցում է ուրիշներից, իր ընկերներից կամ իր վառ երեւակայութեամբ, կամ իր սուր հասկացողութեամբ եւ ըմբռնողութեամբ, — մանկավարժը իր պարտաւորութիւնն է համարում իր բարոյական ներգործութեամբ ոչ թէ աւելի գրգռել այդ տեսակ մանուկին, նրան աւելի քաջալերել, այլ, ընդհակառակն, զսպում է նրա մէջ վաղահաս զարգացման նշւոյնները, լաւ գիտենալով որ մանուկի մէջ վաղահաս երեւակայութիւնը, վաղահաս հասկացողութիւնը միշտ կը լինի ի վնաս նրա առողջութեան, նրա ֆիզիկական կանոնաւոր զարգացման: Եւ այդ տեսակ մանուկի մտաւոր եւ բարոյական զարգացումը միւսների բարոյական եւ մտաւոր զարգացման հետ հասարակցեցնելու նպատակով, շվէյցարացի մանկավարժը աշխատում է նրան աւելի զբաղեցնել մարմնի զարգացմանը նպաստող, մարմնի զարգացմանը ոյժ տուող, մարմինը կազդուրող ֆիզիկական այլ եւ այլ վարժութիւններով:

Ով որ լսել է Շվէյցարիայի անունը, առանց այդ երկիրը ճանաչելու, գիտենալով որ այդ երկիրը հանրապետութիւն է, ռամկապետական կազմակերպութեամբ, անոյատճառ կը կարծի որ ռամկապետական ոգին, այդ ամեն բան հաւասարացնող, առանձնութիւնները թէ անհատների եւ թէ

դասակարգերի վերաբերութեամբ հարթեցնող, ջնջող ոգին անշուշտ իր այդ դրօշմը դրած կը լինի եւ երկրի ուսումնարանական կազմակերպութեան վրայ : Բայց որքա՞ն զարմացած կը լինի այս տեսակ ենթադրութիւններ անողը, երբ աւելի մօտ կը ծանօթանայ չվէյցարական ուսումնարանների մէջ տիրող ոգու հետ :

Վերցնենք չվէյցարական պետական միջնակարգ դպրոցները, այդպէս անուանված կանտօնական դպրոցները, որոնք երկրի մէջ իրանց բռնած դիրքով համապատասխան են մեր արական գիմնադիւններին :

Միջնակարգ դպրոցներում ուսում առնող պատանիները չեն կրում որ եւ է համադրեստ, այլ իւրաքանչիւրը ներկայանում է ամենօրեայ դասերին հաճնված համեմատ իր կարողութեան ու ճաշակին : Ճշմարիտ է, ամենքին պարտաւորեցնում են թէկուզ շատ աղքատ, բայց մաքուր եւ վայելուչ հանգիւյժ, բայց պատանիներից ոչ մէկին չէ արգելվում դպրոցի դասերին ներկայանալ հաճնված լինելով իր ընտանիքի հասարակական դիրքի եւ հարստութեան համեմատ : Համեստ կարողութեան ընտանիքի որդին իր օրական աշխատանքով ապրող հօր որդին գալիս է գիմնադիւն համեստ կերպով հաճնված, հարուստի կամ արիստօկրատի որդին գալիս է նոյն դպրոցը, իւր չունեւոր ընկերների հետ նոյն դասատան նստարանների վրայ, աւելի չքեղ կերպով հաճնված : Յնորք է մտածել, որ հարստութիւնը եւ արիստօկրատիան, կապիտալը եւ տոհմական առանձնութիւնները կարելի կը լինի որ եւ է ժամանակ ոչնչացնել, կամ ձգտել ամեն բան հաւասարացնել : Եւ Շվէյցարիան էլ, որքան էլ ռամկապետական երկիր է, այնու ամենայնիւ չը կարողացաւ, չը մտածեց էլ, չուզեց էլ ոչնչացնել հարստութեան, կապիտալի առանձնութիւնները, կամ արիստօկրատիայի տոհմական այն կամ այն բուն արտաքին ձեւական առանձնութիւնը, որ այնու ամենայնիւ, որքան էլ ձեւական լինէր, միշտ թանգ է եղել հին ծագում ունեցող տների տոհմական գգացմունքին : Շվէյցարիայում էլ կան շատ հին ծագումի գերմանական եւ ֆրանսիական ընտանիքներ von եւ de մասնիկներ կրող ազգանուններով : Սրանց որդիքն էլ մասնակ ժա-

մանակ պարտաւոր են գնալ տարրական դպրոցները, պատանի ժամանակ գնում են գիմնադիւն, նստելով իրանց չունեւոր կամ բանւոր համաքաղաքացի ընկերների հետ միասին դասատան ընդհանուր նստարանների վրա : Սրանցից դպրոցը պահանջում է ամենքի հետ հաւասարապէս դպրոցի խիստ կարգապահութեան, դպրոցի մտաւոր ու բարոյական խիստ դիսցիպլինիայի ենթարկվելը, պահանջում է նրանցից ու ներշնչում է նրանց կատարեալ յարգանք դէպի ամեն համաքաղաքացի ընկերը, որքան էլ չքաւոր լինէր սա, — բայց միջնակարգ դպրոցի աշակերտները ոչինչ համադրեստ չունենալով, հարուստի եւ արիստօկրատի որդուց էլ դպրոցը չէ կարող պահանջել, որ նա դըպրոցը գալով, չքաւոր ընկերոջ պէս անպատճառ չքաւոր կերպով հագնվի : Եւ հարուստի ու արիստօկրատի որդին միջնակարգ դպրոցում հագնվում է Բնդէս կոմունա է, իսկ չքաւորը, իր օրական աշխատանքով ապրող ընտանիքի որդին հագնվում է Բնդէս կոմունա է :

Դպրոցում ամեն մի աշակերտ դպրոցի վարչութեան, տեսչի, վարժապետի կողմից պահանջվող դիսցիպլինիային անպայման է ենթարկվում, — դպրոցական ժամերից դուրս նոյն պատանին կատարեալ ազատ քաղաքացի է : Հանգիւյժով փողոցում իր դպրոցի տեսչին, կամ վարժապետին, աշակերտը քաղաքավարութեամբ եւ նոյն իսկ խոր յարգանքով գլուխ է տալիս նրան, — բայց նոյն տեսուչը, նոյն վարժապետը շատ լաւ գիտեն թէ դպրոցից դուրս նրանք ոչինչ իշխանութիւն չունեն աշակերտի վրա : Դպրոցից դուրս պատանի աշակերտը արդէն դառնում է պատանի-քաղաքացի :

Եւ այդ է պատճառը, որ միջնակարգ դպրոցների աշակերտներն արդէն կատարեալ ազատութիւն եւ իրաւունք ունին դպրոցից դուրս իրանց մէջ կազմել ամեն տեսակ ընկերութիւններ : Պատանիները կազմում են իրանց մէջ երաժշտական ընկերութիւն, երգեցիկ ընկերութիւն, գրականական ընկերութիւն, ունենում են իրանց ժողովներ, կանոնաւոր նիստեր, հաւաքվում են միասին, դրում, խօսում են, վիճաբանում են :

Ահա մի կիրակի օր, մի տօն օր անց-

ներով փողոցով, ձեզ հանդիպում է փողոցում պատանիների մի խումբ, գոյնաւոր գլխարկները գլխին, ինչ որ ձեզ համար անհասկանալի նշաններով, գոյնաւոր լայն ժապաւէնը ուսերից դցած, անկարելի է, մտածում էք դուք, որ դրանք համալսարանի, բարձրագոյն դպրոցի ուսանողներ լինէին, իրանց տեսքով նրանք բոլորն էլ ուսանող լինելու համար դեռ չափից դուրս ջահիլ են, գրեթէ երեխաներ են: Դիմում էք մի անցնողին եւ հարցնում էք թէ ովքեր են այդ պատանիները, նշաններով, գոյնաւոր գլխարկներով եւ ժապաւէններով զարդարված պատանիների, գրեթէ երեխաների այդ խումբը, որ այդպէս հպարտ անցնում է փողոցով: Եւ ձեզ պատասխանում են. « Դա մեր կանտոնական միջնակարգ դպրոցի աշակերտների մի աղատ ընկերութիւնն է, այսօր այս ինչ հիւրանոցի դահլիճում նրանք ունեն իրանց ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը: »

— Միթէ միջնակարգ դպրոցի պատանի աշակերտներն էլ իրաւունք ունեն ձեր երկրում, ձեր բարձրագոյն դպրոցների ուսանողների պէս, կազմել ամեն տեսակ ընկերութիւններ: . . .

— Ինչի՞ չէ: Միթէ չէ՞ կարդացել այսօրվայ լրագրում այդ պատանիների կողմից տպված յայտարարութիւնը, որով նրանք հրաւիրում են իրանց ընկերակիցներին հաւաքվել իմ ասած հիւրանոցի դահլիճում, ընկերութեան ընդհանուր ժողովին ներկայ գտնվելու համար:

— Գուցէ եւ տեսել եւ կարդացել եմ, բայց խոստովանվում եմ, ոչինչ ուշադրութիւն չեմ դարձրել, որովհետեւ երբէք չէի կարող ինձ երեւակայել, թէ այդ յայտարարութիւնը պատկանում է ոչ թէ հասակ առածների մի ընկերութեան, այլ մի ընկերութեան, որ բաղկանում է դեռ տղական հասակում գտնվող անդամներից: »

(ՄԵԱԿ)

Գ. ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ա* ԱՌ Ս*

Ի ՊԱՐՏԻԶԿԱՆ

Աչկունք մեղոյչ սիրավառ,
Բերանն յասմիկ կարմրալար,
Վարդ ծիրանի այտ քընքուշ,
Վարսագեղն իմ դիցանոյշ:

Սամոյր զհերովքն սեւափայլ
Շըղարշ թեթեւ ինքն արկեալ,
Անդ շող կաթէ լուսաթոյր
Ի գիրգ ծաղկունս հեզհամայր:

Յեղեմանման դրախտավայր
Շըրջի միայնիկ վեր ի վայր,
Ջըննէ ըզվարդ եւ շուշան,
Այլ ինք քան զայնս աննըման: . . .

Շընչէ զեփիւռն մեղմիկ,
Մատաղ յայտերս իւր գողարիկ,
Ի ծալ տանի հովն ի ծուփ
Ջմետաքսահիւս շղարշն նուրբ:

Ո՛վ կոյս չըքնաղ, ո՛վ սուրբ սէր,
Դարման սրտիս կարեւիւր,
Ողբամ ըզքեզ յար ի լուր
Անկեալ ի յոյզս սըրտահար: . . .

Ա. ՀԱՄԲԱՐԳԱՅԱՆ

Ի ՄԱՀ ԱՌԱՋԱԿԻՆ

Միթէ Տաւրոս, ընդ կիրճս թիւր,
Ուր լեռ կողերն իւր ճըղէ,
Խրոխտ գողին չը տար դիւր
Որ ճամբորդին կեանք սըղէ:

Այլ մոռացօնք թէ քօղեն
Չանյիշատակ իւր ոճիր,
Երկինք խնդրէ վրէժ գողէն,
Պատուհասէ զիւր նախճիր:

Վախերուն մէջ մի փապար
Ապառաժուտն էր ձեղքեր,
Ուսկից հեղեղ ուժգնաբար
Թաւալ գլոր կը ժայթքէր:

Բազմահառաջ ի ջուրս անդ
Կը կանգնէին ժայռեր ցից .
Գողն հոն թառէր սիրտն ի խանդ ,
Ուղեւորաց ճամբուն կից :

Եւ անարեւ ձորն ի վար
Մարմնով կիսով կը ծըռէր
Թէ արդեօք ո՞ւր որս գտնէր .
Արծուի պէս նա կ'որոնէր :

Դուռն , գիտե՛մ , կ'ուզես իյնալ
Իբրը շանթ դու ամպրոպաց .
Մութ պատել , շուրջն որոտալ
Հեռաշու , խոնջ ճամբորդաց :

Ինչո՞ւ երկինքն ամպոտ է ,
Աստղերն ինչո՞ւ չեն փայլիր :
Աւազա՛կ , գիշերըդ մօտ է ,
Աթափէ՛ , որջըդ իջիր :

Վե՛ր նայէ , վե՛ր , երկինք մուրթ ,
Ամպերն ինչպէ՛ս կուտակին :
Այս է մահուանդ կնիքն , անգո՛ւթ ,
Հերի՛ք օրերդ երկարին :

Ա՛հ , վե՛րն . հողմոց բուռն երկունք
Իրար եկան , գուռացին .
Անասնձ , կատղած կայծակունք
Յանկարծ զամպեր վառեցին :

Մէյ մ'ալ շանթ մը շեշտակի
Գողին գլուխ ջախջախեց .
Ալ հարկ չը կար փութորկի ,
Երկինք ըզվրէժն իւր լուծեց :

Եւ հեւալով ամպոց տակ
Հողմախաղաղ հանգչեցաւ ,
Եւ կամարն իւր կապուտակ
Այգամօտին պարզեցաւ :

Եւ լոյս աւուրն արեւ նոր
Ճանճանջելով անդադար ,
Ցից ժայռեր , ջուր , վախ բոլոր
Նըշտղէր թիւր կիրճն ու դար :

Մ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ

ԽԵՑԵՂԵՆՔ ԵՒ ՅԱԽՁԱՊԱԿԻ

Խեցեղէն ըսելով պէտք է հասկնալ առ
հասարակ այն ամէն անօթք որք կաւային
հողէ շինուած են , եւ այս արհեստն կը
կոչուի խեցկերպութիւն :

Պայլախաղի («խէ») եւ պաղլեղիկի («-
լէ-թ») խառնուրդը հաւ կը կոչուին :

Կաւերու յատկութիւնն է չօշափելեաց
վերայ ըրած կակուղ եւ խղային ներգոր-
ծութիւնը . նաեւ եթէ կաւն շաղուեմք
ջրով կ'ունենամք մի տարածուն հայս (խը-
մոր) որ ընդունակ է ուղուած տիպն ստա-
նալու եւ որ դիւրաւ կ'ողորկի մատանց
ներքեւ . նոյնպէս եթէ կաւն ուժգին կրակի
ազդեցութեան դնեմք , վերոյթ ուեալ հան-
գամանքներն կը կորսնցնէ , այնպէս որ
ջրոյ եւ բոլոր ծորելեաց անթափանցելի կը
դառնայ եւ մի այնպիսի կարծրութիւն կ'ըս-
տանայ որ հրահան երկաթի բախումն ի
սմա կայծ կը հանէ :

Ջերմութեան ներգործութենէն կաւե-
րու կրած այս մեծ փոփոխում խեցկեր-
տութեան գործածուելու յարմարագոյն
նիւթն ըրած է զիրենք :

Բոլոր հողեղէն անօթք , աղնուագոյն
յախճապակիէն սկսելով մինչեւ տնական
ստորնագոյն խեցիք , կաւային հողերէ կը
շինուին , կաղապարաց մէջ պատրաստուելէ
յետոյ բարձր Ջերմութեան ենթարկուելով :

Ջերմութիւնն ինչպէս ըսինք ներգոր-
ծելով կաւին վերայ կը կարծրացնէ եւ ան-
թափանցելի կ'ընէ զայն բոլոր ծորելեաց ,
ինչպէս նաեւ քիմիական տարերց մեծ մա-
սին ազդեցութենէն ազատ կը կացուցանէ .
Արեմն այսքան բազմազան հողեղէն անօթք
որք մեր առօրեայ պիտոյից մի կարեւոր
մասն կը գրաւեն , միայն զիրենք կաղմող
կաւին մաքրութեան համեմատ իրարմէ կը
տարբերին :

Աղիւս եւ հասարակ խեցեղէն . — Շինու-
թեանց համար գործածուած հնագոյն
առարկայն թրծեալ հողէ շինուած աղիւ-
սըն է :

Աղիւսը հասարակ կաւէ կը պատրաստուի եւ շատ տեղեր առատութեամբ կը գտնուի :

Սովորութիւն է որ կաւը ջրով չաղուելէ վերջ կը ձգեն 7-8 ամիս որպէս զի փտտի , որով աւելի տարածուն եւ ձեւընկալ կ'ըլլայ . աղիւսին ձեւատուութիւնն կամ ձեռքով եւ կամ կաղապարով կը լինի եւ որպէս զի հայտը կաղապարին չը փակչի , առաջուց կաղապարին ներսը աւազ կը ցանեն . աղիւսը թրծելու համար զանոնք դէզ դէզ կը կուտակեն եւ միջավայրը կրակ կը վառեն , եւ կամ պարզապէս փուռերու մէջ կ'եփեն :

Թրծուն աղիւսի կարմրութիւնը մէջը պարունակած էրկաթի Բլոսոնի (օգոթ Կը ֆեռ) պէտք է վերագրել :

Ծաղկի ամաններ , պարզ անօթք եւ հասարակ կաւային հողէ կը շինուին :

Կաղապարումէ վերջ խեցեաց ձեւակերպութիւնն ընդհանրապէս Բրոսի հաւաքային վրայ կը լինի :

Բրուտի ճախարակն կը բաղկանայ փայտեայ մի մեծ անիւէ հորիզոնական գիրքի մէջ . մի երկրորդ անիւ աւելի փոքր քան զառաջինն մեծ անիւին հետ հաղորդակցութեան մէջ է ուղղահայեաց առանցքով մը . բրուտը նստած աթոռակի մը վրայ ոտքով կը դարձնէ մեծ անիւն եւ փոքր անիւին վրայ դռնելով հայտն մատերով կ'սկսի ուղած ձեւն տալ նմա . որքան զուարճալի է տեսնել բրուտն որ նստած ճախարակին առջև մեծ արագութեամբ այլ եւ այլ ձեւեր կուտայ հայտն . այնպէս իմն կը թուի թէ անօթն ինքնիրեն կը ծնի , կը ձեւակերպի եւ կը կաղապարի գործաւորին ձեռաց ներքեւ :

Յունական անօթք նախնի խեցկերտութեան ամենէն նշանաւոր օրինակներն կը ներկայացնեն իրենց պարզ , ողորկ եւ չքքնաղ տիպով . արդի բրուտը իրենց ձեռագործները ասոնց նմանցնել կը ճգնին Յունական բոլոր անօթք ապակեման նուրբ և տոկուն ապիկով (vernis) պատուած են . այս ապիկ կալքաքարի (alkali) մը մէջ լուծուած գայլախաղէ կը պատրաստէին :

Յախապէ . — Յախապակին խեցեղինաց ամենէն յարգին է վասն զի Կոնստանտնուպոլսի միջուած սպիտակ եւ մաքուր կաւէ կը պատրաստուի . յայտնի չէ թէ երբ գտած են յախապակի շինելու արհեստը , բայց այս-

քան յայտնի է որ շատ հին ժամանակներէ ի վեր ծանօթ էր յախապակին Չինաց եւ Ճաբոնաց , ուր Կոնստանտնուպոլսի հարուստ հանքեր կան :

Յախապէ Կոնստանտնուպոլսի հախապակի արտադրանք , որ դժբախտաբար չինական վերջին մեծ ապստամբութեան ժամանակ ջնջուեցաւ , յայտնի վկայ մ'էր թէ որչափ ի վաղուց հետէ յախապակին սովորական էր դարձած ի Չինա :

ՅԵՐՈՒՅԱ 1707 թ. դարուն սկիզբներն էր միայն որ բերուեցաւ Սրեւելլի ճամբորդներէն խեցկերտութեան այս գեղեցիկ արդիւնքը . անմիջապէս Եւրոպիոյ ամէն կողմեր այս խեցեղյն նման շինելու աշխատեցան , մինչեւ անգամ թագաւորներ մեծ գումարներ յատկացուցին յախապակույ գիւտին համար :

1704 ին Սաքսոնիոյ մէջ հնարուեցաւ Չինու յախապակույն նման շինելու արհեստն . հնարիչն Պէօթկէր անունով գիտուն մ'էր : 1707 ին Սաքսոնիոյ իշխանը Տրէզտի մէջ Եւրոպիոյ առաջին յախապակույ գործարանն հիմնեց . այս մեծ գիւտ այնքան խնամք գաղտնի կը պահուէր որ նոյն իսկ հնարիչն Պէօթկէր Քէօնիկսթայնի ամրոցին մէջ բանտարկեալ ստիպուած էր իւր գիւտն արդիւնաւորել . այս բռնի գիւտ այնպիսի խիստ հսկումի ենթարկեալ էր որ , գործարանի բանւորներէն որն որ անգաղտնապահ լինել տարակուսուէր , մահուամբ կը քաւէր մեղքն եւ իբր սպառնալիք առ բանւորս արուեստանոցին դրանց վերայ « Գաղտնի է ինչ ցփերէջման » պատուէրն բանդակուած էր . այս մեծ գիւտ Սաքսոնիոյ ոսկի հանքէ մ'աւելի արժեք եւ Պէօթկէրի համար եւս երջանկութեան պատճառ եղաւ , որ պարոնութեան տիտղոսով մեծ պատիւներ գտաւ իշխանէն եւ միշտ Տրէզտի գործարանին տնօրէնն մնաց :

Ի Ֆրանսա եւս Չինու յախապակեղինաց նմանցնելու համար եղած փորձեր գոհացուցիչ արդեանց յանգեցան : 1757 ին Լուի Ժե Սէվրի գործարանն հիմնեց որոյ խեցիք մինչեւ այսօր զամէնքն կը գերազանցեն . սոյն գործարանին համար Ֆրանսայի կառավարութիւնը տարեկան որոշ գումար մը յատկացուցած է արուեստից քաջալերութեան համար ի Ֆրանսա :

Յօդո՞ւմն յախճապ-կոյ . — Յախճապակոյ համար Սէնթ Իբէտի + ասթիւը կը գործածեն որ սպիտակ եւ կակուղ է . ասոր վրայ կը յաւելուն կաւիճ եւ քիչ մ'ալ աւազ . այս խառնուրդը երկանաքարի տակ փոշիացնելով կը լուան խոշոր մնացածները զատելու համար . հայսը շինելէ վերջ պնդապէս կը խառնեն եւ շատ ամիսներ շտեմարանաց մէջ կը ձգեն , որպէս զի փտտի , այսինքն այն քիչ մը գործարանաւոր նիւթերն զորս կը պարունակէ՝ բոլորովին ջնջուին խմորումով : Հայսը չը գործածած ձեռքով լաւ մը կը շաղուեն ու նարնջի մեծութեամբ կըրր գունդեր կը կազմեն . այս գունդերն ուժգինս աշխատութեան տախտակին վերայ կը հարկանեն , որպէս զի փտտութենէ յառաջ եկած կազի պղպղակներ դուրս ցնդին : Շինուելիք առարկային նախաձեւն բրուտի ճախարակի վրայ կը կատարեն , զոր առաջուց բացատրած եմք . սակայն այսպէս ձեւաւորելէ վերջ յարմար չէ թրծումի , զի շատ անկատար է դեռ . ուստի , չորնալու համար զայն մի քանի օր ձգելէ վերջ յէկէ հախճապ-կոյ (tour) անոր վերջին ձեւն եւ ուղուած հաստութիւնն կը տրուի : Յախճապակիէ բոլոր առարկայք ճախարակով չեն շիներ : Շատ բաներ հաղորդեմք եւ հասմաք կը շինուին :

Խողովակները եւ եղջիւրաձեւ յախճապակիներն ինչպէս նաեւ շատ մը գոգաւոր առարկայք հոսմամբ կը շինուին եւ ահա ինչպէս .

Ջրոյ մեծ քանակութեան մէջ յախճապակոյ հայսէն խառնելով , մաքուր խիւս կը պատրաստեն եւ այս խիւսը գածէ ծակոտկէն կաղապարի մը մէջ կը հեղուն . կաղապարին գածն զվուր կը ծծէ , այնպէս որ հայսէն խաւ մը կաղապարին ներքնակողմն կը նստի . գործողութիւնն կը կրկնուի մինչեւ որ այլ եւ այլ խաւեր նստելով ուղուած հաստութիւնն ստացուի :

Այս գրութեամբ շինուած յախճապակիները բացօդեայ տեղ մը կը ձգեն ուր յամբաբար չորնալէ վերջ փուռին վերնա-յարկը առաջին թրծման կ'ենթարկուին . եւ որոշեալ կարծրութիւն մը կ'ստանան . սակայն եւ այնպէս շատ ծակոտկէն ըլլալովին այս խեցեղէնք իրենց սահմանուած գործերուն չեն կրնար ծառայել . ասի անկատարութիւն մ'է որոյ առաջին առնելու հա-

մար առաջին թրծումէ վերջ կը տրուի ապիկն որ մաքրութենէ զատ խեցւոյն ակնհաճոյ մի տեսք կ'ընծայէ :

Յախճապակոյ համար գործածուած ապիկն արաբոյ Էթէ է (feldspath) :

Քաօլինը նոյն իսկ արաստոյ վէմին տարբաղադրումէն գոյացած է . առաջինն չէ հալական , մինչդեռ երկրորդն բարձր ջերմութեան ներքեւ կը հալի եւ ահա այս յատկութիւնն է որ զինք յարմար ըրած է կիտուած լինելու :

Արաստային (feldspathique) ապիկն խիստ բարակ փոշոյ վերածելով ջրոյ մէջ կը խառնեն . գործաւորն այնպիսի ճարտարութեամբ խեցին սոյն խառնուրդին մէջ կ'ընկղմէ որ արաստն միօրինակ կերպիւ նստի խեցւոյն մակերեսոյթին վերայ . — ոչ ծակոտկէն թրծեալ խեցիները վրձինով կամ ոռոգմամբ ապիկելու է :

Յախճապակոյ թրծումն Աէլի գործարանին մէջ երկյարկեայ փուռերու մէջ կը կատարուի . վերնայարկն ինչպէս ըսինք խեցւոյն առաջին թրծում կուտայ , իսկ ստորին յարկին մէջ վերջնականն փուռը չորս արտաքին վառարաններով կը տաքնայ որոց բոցը կողմնական ծերպերէ ներս կը մտնէ : Խեցեղէնք իրենց ձեւով անհալ կաւէ շինուած ընդունարաններ ունին , որոցմով միատեղ փռան մէջ կը դրուին . եփումը 36 Ժամ կը տեւէ . երբ յախճապակին կուզեն ոսկեղօծել կամ գունաւորել , ապիկեալ խեցւոյն վրայ՝ ոսկւոյ փոշի կամ ուղուած գոյնն (որք ընդհանրապէս հանքային մարմիններէ պատրաստուած կ'ըլլան) կը դնեն . այս գոյներ լուծիչով մը խառն կ'ըլլան որ, սովորաբար ոսկեբորակն (պոտաս) է . այսպէս գունաւորեալ խեցիք մասնաւոր փոքր փուռերու խաւիկաց մէջ կը գետեղուին , ուր ոսկեբորակն ջերմութեան ներգործութեամբ կը հալի , ինչպէս նաեւ հանքային գոյները . հալումով այս գոյներն կը միանան ապիկին , ընծայելով նմա իրենց այլ եւ այլ երանգներն : Այս գոյներ շատ քիչ կ'աւարուին եւ ամէն տեսակ լուացողութեանց ու թթուներու , կալքաբերու ազդեցութեանց կը դիմադրեն , վասն զի հալումը խեցւոյն նիւթին հետ գրէթէ մի մարմին ըրած է զիրենք :

Լուի Ֆէկիէ

ՍԱՐԳԻՍ Կ. ԿԻՒՄՇԵԱՆ

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ԼՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ, ԶԱԻԵՇՏԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Փարիզեան լրագրի մը մէջ կը կարդանք.

Նորահաստատ լրագիրներն, որոց պէտքը բնաւ զգալի չէր լիներ, այս վերջին ժամանակներս գոյլերի ջանքեր ըրած են եղական լինելու եւ ոչ եւս նմանելու համար հին հրատարակութեանց զորս ծաղրանկարի մէջ կը ներկայէին գլխուն վրայ ջրաղուխանի մորթակ մը եւ ձակաին վրայ կանաչ խալիւսէ լուսամտի մը: Այս նպատակին հասնելու համար ամեն ինչ տակնուվրայ ըրած են եւ նոր վերնագիրներ հնարած: Խառն լրագրէր ջնջած են եւ անոնց տեղ զըրած են Տեղեկութիւնները, որ բացարձակապէս միեւնոյն բանն է: Ամենուրեք վերնագիրներ դրած են, վերնագիրներ որք յաճախ աւելի երկար են քան կարծեցեալ ահագին յուրերն զորս կը հաղորդեն:

Լրագրութիւնն հաստատած են, այսինքն այդ յաճախ անխորհրդապահ միջամտութիւնն ոյր նպատակն է երթալ հնչեցընել հիւանդ անձանց զանգակն, որպէս զի կարենան զառաջինն ծանուցանել անոնց մահն եւ մանրամասնօրէն նկարագրել վերջին վայրկեանները: Լրագրութեան շնորհիւ, երբ մեծ ոճիր մը գործուած է, մարդ կը մտնէ բանտերուն մէջ եւ կը յաջողի թափանցել մինչեւ խցիկն ուր չարագործը կը հեծէ տամուկ յարդին վրայ: Յայնժամ կը պատմեն մեզ թէ մաքի ինչ տրամադրութեան մէջ գտած են այդ սրիկան, զոր յանգէտա՝ իւր պատմութեան դիւցազնը կ'ընէ լրագրութիւնն: Այս ինչն յոյժ հանգարտ գտած են, գլանիկ մը բոլորելով, վէպ կարգալով, կամ տօմինօ խաղալով իւր սահնորդին հետ: Սրտայոյժ բան: Միւսն, ընդհակառակն, մթագին էր, յուզեալ եւ ընկճեալ, հետաքրքիր թէ մամուլն ինչ կ'ըսէ իւր նկատմամբ կամ թէ ինչ եղած է իւր սրտին հատորը: Ասի աւելի սրտայոյժ է:

Ձէր կրնար հաւատալ թէ մարդիկ ոմանք ո՞րքան սիրող են այդ տեսակ պատմութեանց: Անոնց մէջ կան այնպիսիներ որք պիտի ձանձրանային եթէ համարձակէիր

խօսիլ իրենց պարկեշտ եւ առաքինի էակաց վրայ որք դիւցազնաբար կը տանին թշուառութեանց եւ զրկանաց, եւ ընդհակառակն ժամերով պիտի լսէին պատմութիւնն այն ամեն չարագործաց՝ որք կ'սպասեն արդարութեան հաշիւ տալու ժամուն:

Նմանապէս լրագրութիւնն է որ մայրաքաղաք մը հասնող անձնաւորութեանց ետեւէն՝ կ'իյնայ: Առանց վայրկեան մը կորսնցնելու, լրագրն անոնց ըով կ'երթայ: Վեհապետներ, իշխաններ, դեսպաններ, կարեւոր պաշտօններ ստանձնած մարդիկ են սոքա: Աստ, հնդկաստանցի նապապ մը քսան եւ հինգ ծառայով եւ վաթսուս անտուկով: Պը ծանօթացնեն քեզ իւր հարըստութեան ճշմարիտ քանակութիւնը, իւր ադամանդից կշիռը: Անդ, Լա Բլադացի մեծահարուստ Ամերիկացի մ'է որ իւր երկրին մէջ ադամանդի հանքեր եւ միլիոն մը վայրի ոչխար ունի: Եթէ իշխան մ'է, կ'ըսեն քեզ թէ ուր կը ճաչէ, ինչ կերած է, եւ կը նշանակեն թատրոնն ուր դացած է անցունել իւր երեկոյն: Նոյն իսկ երթալ կուտան զայն այն թատրոններուն մէջ ուր ոտք կոխած չէ երբէք:

Նորա հետեւորդներէն միոյն միջոցաւ կը ծանուցանեն այդ անձնաւորութեանց թէ եթէ կ'ուզեն աղմուկ յարուցանել մայրաքաղաքին մէջ, պարտին իրենց լուսանկարն հանել տալ՝ արտօնելով ի տես հասարակութեան դնել իրենց կենդանագրերն, ապա թոյլատրել պատկերազարդ լրագրաց փորագրել իրենց պատկերն:

Այլ մանաւանդ քաղաքական դեր մը խաղացող կ'սմ դեսպանական պաշտօն մը ստանձնող անձնաւորութեան մը գալտեսան ատեն լրագրութիւնն աչքը չորս կը բանայ: Այն ատեն կ'սկսին փեսայութիւն, որոց նըպատակն է այդ անձն հարցաքննութեան մ'ենթարկել, բերնէն բան մը առնուլ եւ հետեւեալ օր հրատարակութեան յանձնել ամենագաղտնի մտածումներ զորս արտաքին գործոց նախարարին միայն պարտի հաղորդել նա:

Ըստ որում այդ անձինք վերահասու են տեսակցութեան թափարդներուն, զգոյշ ընթացք մը կը բռնեն եւ իրօք բան մը չեն ըսեր: Աստի է որ իրենց խօսակցութիւնը «տափակ» է եւ լեզունին անհամ: Այլ

հակառակ այս, դիւրահաւան ընթերցողներ կան որք այս մանրամասնութիւնները կարգալէ յետոյ կը հաւատան թէ խօսակցած են այդ անձին հետ :

Անցեալ օր լրագրաց մէջ չէինք կարդար թէ Էրպէնժէ գնդապետն, իրազէկ լինելէ յետոյ Պրիէր տը լին զօրավարին յայտնութեանց Թոնքինի յանձնաժողովոյն առջեւ, որոշած էր հրաժարական տալ որպէս զի կարենայ ի մենամարտ հրաւիրել այն որ դատարկեալ էր իւր վարմունքն : Արդ, մինչ լրագիրը այս աղմկայոյզ լուրը կուտային, Էրպէնժէ գնդապետը կը նաւարկէր Հնդկական ովկէանին վրայ, անգիտանալով թէ ինչ կ'ըսէին իւր վրայօք, եւ զուրկ հեռագրերէ եւ լրագիրներէ :

Այդ լուրն, որքան ալ սուտ եւ անհնար լինէր, մեծ յաջողութիւն գտաւ :

Պարապոյ ժամանակներ կան յորում լրաբերութիւնն ո՛չ ոճրագործ եւ ո՛չ մեծ անձ ունի իւր ձեռքին տակ : Այն ատեն է որ դէպքեր կը հնարէ եւ հեռագրեր կը չինէ : Այն հաշակաւոր ծանաար հեռագրաւէն, ոյր վրայ այնքան կը խօսուի, ասոր համար միայն յղացուած է :

Աւասիկ ինչպէս ձեռք կ'առնուն այդ միջոցը : Ինքնին կ'ըսեն . Պուլկարիոյ իշխանը պատերազմի մէջ է . եթէ ծանուցանէինք թէ իւր ներքեւ երկու ձի սպաննուեցան եւ ինքն իսկ վիրաւորուեցաւ . . . Լաւ կը լինի եւ բնաւ երբէք անձնամարտանման : Շուտով սա կերպ հեռագիր մը .

Պէլկարտ, 10 դեկտ. եր. ժամ 5
(Մասնաւոր թերթ)

Պուլկարիոյ Ալեքսանդր եղխանը վիրաւորեցաւ ուռմբի հարուածով :

Երկու օր յետոյ, կ'իմացուի թէ Ալէքսանդր իշխանը սկրդուած անգամ չէ :

Կամ մանաւանդ կը խորհին թէ Գերմանիոյ կայսրը ծեր է, այնքան ծեր որ անցած իսկ է մահկանացւաց սովորական տարիքն : Եթէ մեռցնէին զայն . . . :

Յայնժամ կը դարձնեն փոքրիկ հեռագիր մը սա իմաստով .

Պէրլին, 10 դեկտ. եր. ժամ 5
(Մասնաւոր թերթ)

Գերմանիոյ կայսեր առողջական վիճակը բուռն մտահոգութիւն կը պատճառէ :

Այդ տողերը կարդալով, ընթերցողը

կ'ըսեն . Աստուած իմ, այս լրագիրն ալ ինչ աղէկ տեղեկութիւն կուտայ :

Հետեւեալ օր կ'իմացուի թէ Կայսրը կաղնի մը պէս հաստատուն է, եւ թէ այդ հեռագիր անհիմն է :

Վերջերս, մասնաւոր հեռագրաթերթը պարապ մնացած լինելով, անպատճառ ուղեցին խօսեցնել զայն : Ընթերցողը անհամբեր լուրի կ'սպասէին, եթէ նոյն իսկ աշխարհի մէջ չգտնուէր : Մասնաւոր հեռագրաթերթի վարչութիւնն հանձարեղ գաղափար մ'ունեցաւ : Նրկար ատենէ ի վեր, ըսաւ, Վեսուվը բռնկած չէ . եթէ ծանուցանէինք թէ ժայթքում մը տեղի ունեցեր է : Ինչո՞ւ չէ : Յայնժամ հասարակութեան հաղորդեցին հետեւեալ տողերը .

Նաբոլի, 10 դեկտ. եր. ժամ 5
(Մասնաւոր թերթ)

Վեսուվ մեծ բոցեր կ'արձակէ : Սեւ մուխ մը կ'ենէ Պոմպէյէն եւ Հերքուլանումէն : Կը վախցուի թէ ժայթքում տեղի ունենայ :

Մարդս «խալկան» է, կ'ըսէ իմաստունըն, որով կ'ըմբռնենք թէ ինչ ինչ խանդավառ բնութիւնը «ըջափ դիւրաւ կրնան խաբել իրենք զիրենք : Այսպէս, այդ հեռագիրը կարդալով, յորձեռանդն լրաբեր մը ճանբայ կ'ենէ Նաբոլի երթալու, միտքը դնելով տեսնել ժայթքումն եւ հոսուն լավայի վերջին կոհակն, Վեսուվի հետ իսկ «խալկան» որպէս զի կարենայ ամենէն մասնաւորապէս տեղեկութիւններ հաղորդել իւր լրագիրն՝ հրաբխին դիտաւորութեանց վրայ :

Հում հասնելով, այդ լրաբերն իմացաւ թէ Վեսուվ յոյժ հանդարտ էր, առանց բոցի եւ առանց ժայթքման : Չարունակեց իւր ուղեւորութիւնն :

Այլ անապատին մէջ կը բարբառինք : Ներկայ ժամանակս, լրագրաց մէջ խելացիներն անոնք են որ աղմկայոյզ լուրը կ'ընդունին առանց ըննութեան : Ճշմարիտ լինին թէ սուտ, հոգ չէ : Ընթերցողին ուղածն է նորութիւն : Մնաց որ այս դրութիւնն իւր լաւ կողմը ունի : Խնայողական է : Դրէք այդ ծանաար հեռագրաւէն զօրեղ երեւակայութեան տէր խմբագրի մը ձեռաց մէջ, եւ նա պիտի յօրինէ հեռագրեր որք չէ թէ միայն այս ինչ կամ այն ինչ Գործակալութեան հեռագրաց պէս սուղ չեն, այլ նաեւ անհունապէս աւելի չահագրգիռ են :

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐՔ

ԹԻԻ 6.	(Մասի Թիւ 3798)
16.	3808)
17.	3810)
18.	3810)

ԽՆԴԻՐ

ԹԻԻ 19.


Ջրայից աման մը կշռելէ յետոյ մէջը կը դնենք հաստատուն մարմին մը որոյ տեսակարար ծանրութիւնն է Ծ, եւ կը դիտենք թէ ամանին կշիռը Կ յաւելում մը կ'ստանայ: Այն տուեալներու միջոցաւ գտնել ամանին մէջ գրուած հաստատուն մարմնոյն ծանրութիւնը:

Գտնուած ձեւանը գործածել հետեւեալ օրինաւ:
ԿԻՆ. Ծ = 1, 83, Կ = 45, 36 կուամ:

(Պաք. Բարեզ, 1885)

ԽՆԴԻՐ ԹԻԻ 15

ԼՈՒԾՈՒՄՆ



Ենթադրենք թէ խնդրուած եռանկիւնն է Ա. Բ. Գ. Բ. Գ. կողը կ'երկարեմ իւր երկու ծայրերէն եւ կ'առնեմ Բ Ա. = Բ Ա. եւ Գ Ա. = Գ Ա., յետոյ կը միացնեմ Ա. կէտը Ա. եւ Ա. կէտերուն: Այսպիսով կը կազմեմ Ա. Ա. Բ. եւ Ա. Ա. Գ. երկու հաւասարասրուն եռանկիւններ որոց հաւասար անկեանց իւրաքանչիւրն, առաջնոյն համար Բ, եւ երկրորդին համար Գ անկեանց կէսն է, ինչպէս դիւրին է հետեւցնել պատկերին շինութենէն:

Ըսել է թէ Ա. Ա. Ա. եռանկեան մէջ մեզ ծանօթ են, խարխիսը Ա. Ա. որ հաւասար է խնդրուած եռանկեան չընդգծին, եւ խա-

րըսին երկու անկիւններն որը հաւասար են տրուած անկեանց երկուսին կէսերուն:

Այս այսպէս ըլլալով Ա. Բ. Գ. եռանկեան շինութիւնն ամենադիւրին կը ձեւանայ. արդարեւ Ա. Ա. Ա. եռանկիւնը շինելէ զկնի կը բաւէ Ա. Ա. եւ Ա. Ա. կողերուն միջին ճ եւ ճ կէտերէն ուղղահայեացներ բարձրացնել որք կուտան Բ եւ Գ կէտերն, զորս միացնել Ա. կէտին:

ԱՆՈՒԱՆՔ ԼՈՒԾՈՂԱՅ

Տ. Ս. Յ. Յ.

Գատը-գիւղ

Կապիկն

Աստ

Տ. Մ. Սարրաֆեան

Աշակ. Պէրպէր-եան վրժարնի:

Տ. Ն. Յակոբեանց. Դաւրէժ. — Թիւ 12 Իւնի-ոյ լուծուածիդ ուղիղ է:

ՇԱԲԱԹԱԿԱՆ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

28 Փետրուար 1886

Բարեկենդանն, այս տարի, շատ անշնան անցաւ Պոլսեցւոցս համար: Տխրութեան ստուեր մը սփռուած էր ընտանեկան գրեթէ ամեն շրջանակներու վրայ. սուգ բարձրացուած մէջ, սուգ ժողովրդական դասերուն մէջ, կարծես ամեն ինչ միացած էր զուարթութիւնն հեռացնելու վտարի արիւնքին: Օր չ'անցաւ որ մահուան մը գոյժը չ'ունենայինք. այսօր իսկ կը կատարուին երկու յուզարկաւորութիւնք. Ա. միրայական Գերգաստանի մը կրտսեր որդին՝ Մաքսուտ Միրայէլ էֆէնտի՝ օսմ. ընդհ. հիւպատոս Ի Շիրա, վախճանեցաւ անցեալ շաբթու իւր պաշտօնատեղին, սակաւօրեայ հիւանդութենէ մը յետոյ, տակաւին երիտասարդ, առողջ, եւ դիւանագիտական զեղեցիկ ասպարէզ մ'ունենալով իւր առջեւ տեղւոյն հելլենական իշխանութիւնը եւ հիւպատոսական մարմինը մեծ պատուով փոխադրեցին հայազգի պաշտո-

նատարի մարմինն ի չողենաւ, եւ թաղման արաղութիւնը մեծահանդէս կը կատարուի այսօր յՕրթագիւղ:

Երկիւղած բազմութիւն մը կը խռնի գրեթէ միեւնոյն ժամուն, ի Բերա, Հայր Էնֆիէճեանի դադադին շուրջը: Հակահասունեան ազգայնոց Պետը՝ հանրածանօթ իբր պերճախօս քարոզիչ եւ ատենաբան, իբր հմուտ եկեղեցական, ճարտար հրապարակագիր եւ քաջ օրէնագէտ, զգալի պատիւ մը կը թողու իւր հօտին մէջ, որուն կ'առաջնորդէր այնքան տոկունութեամբ եւ անձնուիրութեամբ: Վերջին ժամանակներս ըսուեցաւ թէ Հակահասունեաց Պետն ուղղակի Հռոմայ Պապին յարեր եւ հնազանդութիւն յայտնած է Վատիկանի իշխանութեան, սակայն մինչեւ իւր վերջին վայրկեանն այս զրոյց չէր ստուգուած, եւ այցելութիւնն զոր պատական նուիրակ Տ. Րօթէլլի տուաւ Հայր Էնֆիէճեանի՝ նորա հիւանդութեան դառն օրերուն մէջ, քաղաքավարական եւ քրիստոնէական պարտականութիւն մ'էր լոկ, ինչպէս եւ կատարեց մեր Ս. Պատրիարք Հայրն՝ Բերայի Արժ. Քարոզիչն շրջելով իւր կողմէ ի տեսութիւն:

Հայր Գրիգոր Էնֆիէճեան հազիւ 50 տարեկան կար. բարձրահասակ, համակրելի դէմքով եւ յանկուցիչ խօսուածքի տէր եկեղեցական մ'էր. իւր քարոզներ խոր տպաւորութիւն կընէին նոյն իսկ իւր հօտին անմիջական շրջանակէն դուրս գտնուած ազգայնոց վրայ, որք յաճախ կերթային ունկընդերն նորա վարդապետութեան:

Մնած է 1858ին ի Տիգրանակերտ եւ իւր կրթութիւնն առած էր Զմմարայի (ի Լիւբանան) վանքին մէջ. 1858 ին վարդապետական աստիճան ստացաւ հանգուցեալ Գերերջ. Գրիգոր Կաթողիկոսէն. մինչեւ 1867-68 զանազան գաւառաց մէջ հովուական պաշտօններ վարելէ յետոյ, Կ. Պոլիս գալով, Հայ Հռոմէականաց Պատրիարքարանի քարտուղար անուանեցաւ: Քիչ վերջ յիշեալ հասարակութեան մէջ ծագած հանրածանօթ խնդրոյն առթիւ, Հակահասունեան կուսակցութեան յարեցաւ եւ 7-8 տարի մաքսուելէ յետոյ ի պաշտպանութիւն իւր ստանձնած դատին, յիշեալ կուսակցութեան պատկանող սակաւաթիւ եկեղե-

ցականաց գլուխ բարձրացաւ եւ այդ դիրքին մէջ կը մնար մինչեւ ցայսօր:

Գեր. Էնֆիէճեան շուրջ 8 ամէն ի վեր կը տառապէր քաղցկեղէ եւ թէպէտ մերթընդ մերթ կարող կը լինէր ելնել անկողնէն ու շրջադայիլ, բայց միշտ կզգար թէ սոսկալի ախտն արմատ ձգած էր մարմնոյն մէջ եւ կ'սպառէր իւր ոյժն: Հուսկ ուրեմն, հակառակ բժշկական ամեն խնամոց, աւանդեց հոգին այս երեքշաբթի գիշեր:

Եւ իբր թէ բաւական չլինէին մեր տղաբուծութիւնը, ռուսահայ երիտասարդ մ'ալ եկաւ իւր կեանքը կնքել ի Պոլիս: Պ. Գ. Տէր Յարութիւնեան՝ Ղարապաղցի ազգային, որ Կաւկասիոյ պետական ռուս վարժարանաց թեմական տեսչի կարեւոր պատուը կը վարէր, աստ եկած էր քիչ մը կաղդուրելու համար. հիւանդութիւն մը վրայ հասաւ եւ Պ. Տէր Յարութիւնեանց հիւրընկալուեցաւ Շիշլիի ռուսական հիւանդանոցին մէջ ուր մեռաւ քանի մ'օր անառջ: Քանի մը սակաւաթիւ բարեկամը ու ծանօթներ գնացած էին մխիթարել զինքն իւր պանդխտութեան մէջ. այլ իւր մահէն յետոյ, յայտնուեցաւ թէ ռուսահայ երիտասարդն որքան աւելի իրաւունք ունէր հանրային համակրանաց եւ յիշատակութեան: Իւր բովանդակ հարստութիւնը՝ շուրջ 3000 ռուբլի, կտակաւ կը թողու Ղարապաղի Տաթեւ գիւղին, ուր ծնած էր, հոն արհեստագիտական վարժարան մը հիմնուելու համար: Իսկ իւր թաղման ծախուց յատկացուցած էր մի միայն 5 ռուբլի:

Այսօրիս հաղուագիւտ զգացման տէր երիտասարդ մ'էր ահա որ գնաց հանգչիլ Շիշլիի գերեզմանատան մէջ, հեռու իւր բնագաւառէն որ պիտի գիտնայ սակայն օրհնել միշտ նորա յիշատակը:

Ռուսահայք գիտեն յարգել նաեւ կենդանեաց յիշատակը, եւ ո'չ միայն բարերարացն, այլ նաեւ գրագէտներու, բանաստեղծներու, հրապարակագիրներու յիշատակը: 1882ին կը տօնէին Մեղրի խմբագիր Պ. Սիմէոնեանցի 25 ամեակը եւ այս տարի կը պատրաստուին տօնել Ռափայէլ Պատկանեանի (Քամառ Քաթիպա) երեսուն եւ հինգերորդ յորեքեանը: Թիֆ-

լիզի ազգայնոց մէջ՝ գովելի շարժում մը կը նշմարուի այս նպատակաւ : մասնաժողով մը կազմուած է արժանավայել կերպիւ տօնելու ազգային մեծ բանաստեղծին անունը եւ ռուսահայ թերթերն հրաւէր կը կարգան հասարակութեան մասնակցիլ այս տօնին . արդէն մեծ համակրանք եւ փոյթեռանգութիւն կը նշմարուի ամեն կողմէ , եւ Մշակ կառաջարկէ , փոխանակ ոսկի դրիչ ու արծաթեայ նուէրներ , սպակներ եւ գրաւոր ուղերձներ զրկելու Մայր Աթոռի հեղինակին , ընդհանուր հանգանակութիւն մը կատարելով , նիւթական նպաստ մը հասցունել սիրեցեալ բանաստեղծին , որ չքաւոր վիճակի մէջ կ'ապրի ի Նոր Նախիջեւան :

Եւ միթէ սոսկ իբր ռուսահայոց բանաստեղծը կը ճանչնանք զՔամառ Քաթիպայր երգերն այնքան յուզած են եւ մեր սրտեր . միթէ՞ ընդհանուր Հայութեան բանաստեղծը նոյնքան համակրանք չափ տի գտնէ , եթէ ձեռնարկուի ի մեզ եւս տօնել նորա յորելեանը :

Եթէ քիչ մ'աւելի ծանրացանք Ռուսահայոց յորելեաներուն եւ մեռեալներու յիշատակին վրայ , պատճառն այն էր որ մեր ազգային շրջանակաց մէջ գործունէութեան մեծ նշաններ չերեցան վերջին մէկ երկու եօթնեկաց մէջ :

Ազգային ժողովն ամիսներէ ի վեր երկու նիստ միայն գումարած է , օրակարգ ունենալով միշտ ճկաթողիկոսական տեղեկագրի մը խմբագրութեան եւ Սահմանադրութեան վերաբնութեան երկու յանձնաժողովոց կազմութիւնն , որք չ'կրցան ընտրուիլ տակաւին . այսօր ալ նիստ չ'ըրաւ , եւ եթէ գումարի Մեծ Պահոց երկրորդ շաբթուան մէջ , ատենական գործողութիւնը ու միջադէպեր գուցէ դարձեալ թոյլ չտան նմա կատարել այդ երկու կարեւոր յանձնաժողովներու ընտրութիւնն որուն ստիպողաբար կը փափագի Ս. Պատրիարք Հայրն :

Քաղաքական ժողովն այսօր պիտի գումարէր իւր սեղանին վրայ դիզեսլ ընթացիկ գործերով զբաղելու համար կրօնական ժողովն եւս հաւանաբար նիստ ընէ ի մօտոյ : Տեսուչ Խորհուրդը քիչ շատ կանոնաւորութեամբ կը շարունակեն իրենց աշխատութիւններ , բայց յիշատակութեան արժանի

տնօրինութիւն մը չհրատարակուեցաւ վերջերս անոնց կողմէ :

Յառաջիկայ շաբթու իւր պաշտօնատեղին կուղեւորի Գեր. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրեան՝ նորընտիր առաջնորդն Եգիպտոսի , որոյ պաշտօնը վաւերացնող կայսերական Ֆէրմանն ու Պատրիարքական կոնդակն ելած են արդէն : Իզմիրեան Սրբազանի պիտի յաջորդէ , կըսուի , Գեր. Վահրամ Եպիսկ. Մանկունի , զոր Իւսկիւտարի Ս. Կաթապետ Թադի ազգայինք իրենց քարոզիչ խնդրած են : Ամէն աւելի է որ հանգուցեալ Կաթողիկոսի ձեռնասունն ու գլխաւոր խորհրդականը մայրաքաղաքս եկած է Ելմիածնէն , բայց առանձնացեալ կ'ապրի եւ ազգային գործօն շրջանակներու մէջ չ'իջուեցաւ տակաւին Ն. Գերապատուութեան անունն :

Կը յուսացուի թէ ի մօտոյ կարենայ նաեւ իւր պաշտօնատեղին ուղեւորիլ Պիլէ-ճիքի առաջնորդական նորընտիր տեղապահ Արժ. Յովսէփ վարդապետ Սարաճեան՝ երբեմն առաջնորդ Պուլանըքի : Յովսէփ վարդապետ իւր նախորդ պաշտօնավարութեան օրէն առկախ մնացած դատի մը պատճառաւ կը թափառէր աստ . գոհունակութեամբ ծանուցուեցաւ շաբթուս մէջ թէ Պոլսոյ Պատժական Ատեանն՝ անհիմն գըտնելով Յովսէփ վարդապետի դէմ եղած ինչ ինչ ամբաստանութիւններն , անպարտ հրաջակեր է զնա : Արժ. Սարաճեան բանիբուն վարդապետ մ'է եւ կրնայ արդիւնաւոր հանդիսանալ նոր պաշտօնին մէջ յոր կը կոչուի :

* * *

Ներքին լրոց մէջ յիշատակութեան արժանի է Արեւելեան - Բուսելիի մաքսային խնդիրն որ գոհացուցիչ լուծում մ' ստացաւ վերջապէս : Պուլկարական ապստամբութեան ծաղումէն յետոյ , Պուլկար կառավարութիւնը մաքսային շղթայ մը հաստատած էր Արեւելեան - Բուսելիի եւ Օսմ. նահանգաց միջեւ , հակառակ տրամադրութեանց Պէրլինի Դաշնագրոյն . այդ մաքսային շղթային հաստատումմբ , այն եւրոպական ապրանքներ որք Թուրքիա ներմուծուելով 8 առ 100 մաքսատուրք մը

կը վճարեն, Թուրքիայէն յԱրեւելեան - Բու-
մէլի զրկուելով 8 առ 0₁₀ յաւելեալ
տուրք մ'էս կը վճարէին: Այս տնօրինութիւն
ամենէն աւելի կը վնասէր Ֆրանսայի որ
տարին շուրջ 100 միլիոն Ֆրանքի ապրանք
կը ներմուծէ ի Բումէլի Կ. Պոլսոյ ճան-
քով, եւ վերջին քանի մ'ամսոց մէջ փո-
խանակ 8 առ 0₁₀ ի 16 առ 0₁₀ մաքսատուրք
վճարելու հարկադրեալ էր: Պ. ալ Սու-
պէյրան՝ Ֆրանսացի ելմտագէտն՝ այս
խնդիրն յուզեց Փարիզի Նրեսպիտանական
Ժողովոյն մէջ եւ նախարարութեան ձեռք
առած միջոցները լսելէ յետոյ, բանաձեւ մը
առաջարկեց աւելի ազդուութիւն տալու
համար այդ ձեռնարկներուն: Հետեւաբար
Ֆրանսա բացարձակապէս յայտարարեց առ
Բ. Դուռն, թէ ինք պիտի զլանայ իւր հա-
ւանութիւնը Թուրքո - պուլկարական Պայ-
մանագրոյն եւ չ'պիտի մասնակցի Դեսպա-
նախորհրդոյն, ցորչափ Բումէլիական իշխա-
նութիւնը շարունակեն մաքսատուրք առ-
նուլ Եւրոպայէն Թուրքիոյ ճանքով Արե-
ւելեան - Բումէլի ներմուծեալ ապրանքնե-
րէն: Մի եւ նոյն ձեռնարկին յարելով նաեւ
Անգլիա, Մեծ - Եւրոպոս Քեամիլ փաշա
պաշտօնագրով մը ծանոյց դոյս ամենայն
Պուլկարիոյ իշխանին: Ն. Բարձրութեան
կողմէ ո՞ր եւ է մերժում չափազանց յա-
ւակնութիւն մը պիտի լինէր. ուստի եր-
կուշաբթի իրիկուն հասաւ Աղեքսանդր իշ-
խանի պատասխանն, որ կը յայտնէր թէ
համակերպելով կայսերական կառավարու-
թեան ստիպմանց, հրամայած է որ ջնջուի
մաքսային չղթայն: Այս կերպով կարգա-
դրուեցաւ տեղացի եւ օտար վաճառակա-
նաց համար աւագ կարեւորութիւն ունե-
ցող այս խնդիր, որով այն եւրոպական
ապրանքներ որք ի Թուրքիա կը վճարեն ա-
ռաւ հարկի օրինական մաքսատուրքն, ա-
ռանց ուրիշ մաքսի պիտի կրնան Արեւել-
եան - Բումէլի զրկուիլ ըստ առաջնոյն:

Այս առեւտրական դժուարութեան
բարձմամբ, բարեօրման քայլ մ'էս կառ-
նու պուլկարական խնդիրն եւ Դեսպանա-
խորհրդոյ գումարումը կը մերձենայ: Ար-
դէն, մեծ Տէրութեանց կողմէ սկզբամբ
ընդունուած է Դեսպանախորհրդոյ վերստին
գումարումն թուրքո - պուլկարական Պայ-
մանագրոյն վաւերացման համար, եւ

գումարման աւուր որոշումը կը մնայ:
Ռուսիոյ կողմէ միայն առարկութիւն
մը եղած էր սա մտօք, թէ այն խառն
յանձնաժողով որ ըստ յիշեալ Պայմանա-
գրոյն, պիտի բարեփոխէ Արեւելեան -
Բումէլիի Կազմական Կանոնադրի ինչ ինչ
կէտերը, կազմուի նախ եւ աւարտէ իւր
աշխատութիւն, յետ որոյ միայն գումարի
Դեսպանախորհուրդն որ յայնժամ չատ ա-
ւելի արդիւնաւոր եւ գործնական կը լինի:
Յոյս կայ սակայն որ Բեդրսպուրիի Դահլ-
ճին այս առարկութեան մասին համաձայ-
նութիւն մը գոյանայ եւ մեծ Տէրութեանց
ներկայացուցիչք գումարին յառաջիկայ չաբ-
թու սկիզբը, դարձեալ Թօփհանէի Քէօշլին
մէջ, ընդ նախագահութեամբ արտաքին
գործոց նախարար Սայիտ փաշայի:

Աթէնքի լրագրաց նորագոյն տեղեկու-
թեանց հետեւելով, կը տեսնենք որ, եթէ
ո՛չ անստոյգ գէթ կանխահաս էր այն են-
թադրութիւն թէ սերպօ - պուլկարական
հաշտութեան կնքմամբ Յունաստան կը մի-
տի հետեւիլ Միլան թագաւորի աշխարհա-
վարութեան եւ հրաժարիլ պատերազմական
պատրաստութիւններէ: Յարգ ոչինչ եկաւ
ստուգել այս ենթադրութիւնն. ընդհակա-
ռակն մեծ Տէրութիւնը նորանոր մարտանա-
ւերով կը զօրացնեն իրենց նաւատորմերն
որք կը գտնուին ի Սուտա, եւ վիքթորիա
Թագուհւոյն երկրորդ որդի Էմիլպըրի
դուքսն անցեալ չաբթու անդ հասնելով,
ստանձնեց բրիտանական նաւատորմի ընդհ.
հրամատարութիւնն:

*
*
*

Քաղաքական հրատապ լուրեր չ'ունե-
ցանք չաբթուս մէջ. Եւրոպա իւր ուշը
կեդրոնացնելով հանդերձ Յունաստանի,
Սերպիոյ եւ Պուլկարիոյ վրայ, կցապի իւր
ներքին խնդիրներով:

Ֆրանսայի Խորհրդարանն աւարտեց Պո-
նաբարդեան եւ Պուրպոնեան իշխանաց
հայրենի հողէն արտաքսման խնդիրն
զոր յարուցած էին Պ. Պ. Տիւշէ եւ Բիվէ:
Այս երեսպիտանաց առաջինը կ'առաջարկէր
Ֆրանսայէն անմիջապէս արտաքսել յիշեալ
գերդաստանաց իշխաններն հանդերձ ըն-

տանեօք : Իսկ երկրորդն առանց այս ծայրայեղութեան դիմելու, կ'առաջարկէր իրաւունք տալ նախարարութեան ի հարկին տնօրինել սոյն արտաքսումն : Այս երկու առաջարկներն եւս մերժուեցան, առաջինն 195 ի դէմ 545 քուէով եւ երկրորդը 188 ի դէմ 533 քուէով : Ապա, ժողովն 112 Միապետականաց դէմ 553 Հանրապետականաց քուէով օրակարգ մը քուէարկեց, որ վրաստահութիւն յայտնելով նախարարութեան արժեքութեան եւ ազդուութեան վրայ, համոզում կը ցուցնէր թէ Կառավարութիւնը պիտի գիտնայ պարագայից պահանջմանց համաձայն միջոցներ ձեռք առնուլ՝ երբեմն Ֆրանսայի վրայ իշխած գերդաստաններու անդամոց դէմ :

Այս կերպով իշխանաց արտաքսման հարցը վերցաւ Երեսփ. Ժողովոյ օրակարգէն, բայց քուէարկեալ բանաձեւը տեսակ մ'ազդարարութիւն է առ նախարարութիւնն, թէ իշխանք ալ հասարակ մահկանացուաց նման հանրային օրինաց ենթարկեալ են եւ թէ հետեւաբար իւր պարտականութիւնն է անոնց նկատմամբ ընել ինչ որ պիտի ընէր յետին քաղաքացւոյն համար, եթէ հաստատեալ կանոնաց եւ Հանրապետութեան շահուց դէմ գործէր :

Անգլիոյ Խորհրդարանը կ'զբաղի գլխաւորաբար Իռլանտական հարցովն որ նոր զարկ մ'ստացաւ Պ. Կլատտոնի պաշտօնի կոչուելէն ի վեր : Խորհրդարանի զանազան կուսակցութեանց անդամներէն միութիւն մը կազմուած է որ հաշտարար եղանակ մը եւ գործնական միջոցներ կը խորհի գահացում տալու համար Իռլանտայի պահանջմանց, յարգելով հանդերձ Մեծին Բրիտանիոյ միութեան պահպանման գերազոյն սկզբունքն :

Փետր. 25 ին Կալիֆորնիայէն հեռագիր մը ծանոյց թէ, Մանտայէնն առնուած լրոց նայելով, Եէմէթի անգլ. պահապան զօրքն 500 հոգիէ բաղկացեալ, պաշարուեր է 9000 Պիրմաններէ : Բրէնտէրկասդ գօրավարն յառաջ կը խաղայ յօգնութիւն, այլ կը գուշակուի թէ սոսկալի դիմադրութեան մը պիտի հանդիպի : Բայց այդ դիմադրութիւնը չեն կրնար կասեցնել կամ ամենաթեթեւ ազդեցութիւն մ'իսկ ընել անդրդուելի Անգլիացւոց վրայ, որք անսպառ զբոսում եւ մարդ հասցնելու զօրութիւնն ունին, այն ժողովրդոց դէմ զորս արշաւելու ձեռնարկած են միանգամ, ինչպէս քրինակը ցոյց կուտան դեռ ի Սուտան :

Պէրլինէն հեռագիրը բաւական մտահոգութիւն կը յայտնեն Պիզմարը իշխանին նկատմամբ որ յօգացաւ կը նեղուի, կերեւի թէ բիչ մը ծանր կերպիւ որ «դիւանագիտական հիւանդութեան մը» գոյնը չունի այս անգամ :

S. Ա.

ՆՈՐԱՀԱՏ ՀԱՅԵՐԷՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐ

Վիէննայի Միսիթարեան Հարց տպարանն այս անգամ պատրաստած է և ազգային արուեստանոցաց յառաջդիմութեան կը նըւիրէ Տառեր, ապագրական գեղագրութեան ճշգրիտ օրինաց համաձայն և ի մասնաւորի նոր-անգղիական դիւրընթեռնի բարեձեւ ոճոյն յարմարեցուած գծագրութեամբ, և ըստ ազգային հայ նկարագրին առանց նաեւ դոյզն այլալուծեան՝ ճարտար դրահատի ձեւքէ ելած : Առանձին մտադրութիւն մ'եղած է՝ գործոյս մէջ՝ տընտեսական կամ խնայողական մասին, որով և Գրաչարութեան արագութեանն ու դիւրութեան ալ. այնպէս որ իւրաքանչիւր Աստիճան՝ հանգերձ Գլխագիր և Բոլորգիր և Շեղագիր այբուբենիւքն՝ ու կիտագրութեամբքը մինակ 120 պողպատեայ Հայր, եւ 140 պղնձի Մայր կը համրէ՝ թուանշաններովն ու (գաղութանեալ, galvanisé) կից գրերովն ծանօթ է որ յառաջները 160 մինչեւ 200) և աւելի կ'ելլէր ասոնց թիւը :

Վիէննայի Միսիթարեան Հարց Միաբանութիւնն կը յուսայ ասով ոչ միայն Տպագրատանց այլ և դպրոցաց և առ հասարակ ընթերցող հասարակութեան հաճոյական ծառայութիւն մը մատուցած ըլլալ. ինչպէս արդէն Լրագիրներ համբաւեցին տառիցս բարեձեւութեանն հետ՝ մասնաւորապէս ալաց առողջապահութեան տեսակետէն դիտուած առաւելութիւնները :

Տառերու վաճառումն ըստ կըոյ է, այսինքն կենդինարի հաշուով. ինչպէս յայտնի է՝ Քանակութեանն ա զնոյն Խաւերն իբրեւ հեթոտորեակ համեմատութեան մէջ ըլլալով :—Գնոյն ու վճարման պայմաններուն վրայ առանձին կը խօսուի :

Այս նորահատ Տառերուն տպագրութեան վրայ գաղափար մ'ունենալու կամ գնոց տեղեկանալու համար դիմել Արեւելի խմբագրատունը կամ Վիէննական Միսիթարեանց գրավաճառութեան խանութն ի Բերա-Բանկալթի :

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԼՐԱԳՐՈՅ